

ԼԲՏ+ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՆՈՒՅՆԱՍԵՌ ՋՈՒՅԳԵՐԻ ՇՐՋԱԼՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԼԲՏ+ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՆՈՒՅՆԱՍԵՌ ԶՈՒՅԳԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

«ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ՓԻՆՔ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2023 Թ.

«ԼԲՏ+ կանանց և նույնասեռ զուգընկերների շրջանում բռնության դեպքերն ու դրանց միտումները Հայաստանում» հետազոտությունն իրականացվել է «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» հասարակական կազմակերպության կողմից «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ:

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ փորձագետների ներգրավմամբ՝

Իրավաբաններ Կարինե Աղաջանյան և Հասմիկ Պետրոսյան
Սոցիալական աշխատողներ Աննա Մելիքյան, Լիաննա Սարգսյան և Սեդա Հակոբյան

Խմբագրություն՝ Հռիփսիմե Կիզոգյան և Լիլիթ Ավետիսյան

© «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն (Փինք Արմենիա)
© «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» հասարակական կազմակերպություն

Հուլիս, 2023 թ.

Այս հրապարակումը պատրաստվել է «Կանանց դեմ բռնության վերացման ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի» ֆինանսավորմամբ, սակայն արտահայտված տեսակետները և ներառված բովանդակությունը չեն ենթադրում ՄԱԿ-ի կողմից պաշտոնական հաստատում կամ ընդունում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 9

ՄԱՍ 1. ԼԲՏ+ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՒ ՆՈՒՅՆԱՍԵՌ ԶՈՒՅԳԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ 11

1.1 Բռնություն. բռնության ձևերն ու դրսևորումները 12

1.2 ԼԲՏ+ կանանց և նույնասեռ զուգընկերների շրջանում բռնության առանձնահատկությունները 12

1.3 ԼԲՏ+ կանանց նկատմամբ և նույնասեռ զուգընկերների շրջանում ընտանեկան բռնության հետևանքները 13

1.4 ԼԲՏ+ կանանց և նույնասեռ զուգընկերների շրջանում բռնության օրինաչափությունների միջազգային ակնարկ 15

ՄԱՍ 2. ԼԲՏ+ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՆՈՒՅՆԱՍԵՌ ԶՈՒՅԳԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 18

2.1 Հետազոտության մեթոդաբանություն 19

2.2 Ներպետական օրենսդրության և իրավական կարգավորումների վերլուծություն 20

2.3 ԼԲՏ+ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության եվ նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության արձանագրված դեպքերի ամփոփում 23

2.4 Հասարակական ու մասնագիտական դաշտերում մասնագետների հետ փորձագիտական հարցազրույցներ 28

ԱՄՓՈՓՈՒՄ 35

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 36

ՀԱՎԵԼՎԱԾ 38

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեսբի (նույնասեռական կին). անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձի հետ:

Բիսեքսուալ (երկսեռական). անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ:

Գեյ (նույնասեռական տղամարդ). անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձի հետ:

Տրանսգենդեր կամ տրանս. հովանի եզրույթ է, որը ներառական է մի շարք ոչ նորմատիվ գենդերային ինքնությունների և արտահայտումների համար: Օգտագործվում է որպես ածական և վերաբերում այն մարդկանց, որոնց գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից, և ներառում է տրանսսեքսուալ անցյալով կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, հագուստափոխ անձանց և այլն:

Կենսաբանական սեռ. մի շարք բնութագրիչների համախումբ, ինչպիսիք են սեռական քրոմոսոմները, հորմոնները, սաղմնային բջիջները, արտաքին և ներքին սեռական օրգանները, երկրորդական սեռային հատկանիշները:

Գենդերային ինքնություն. որևէ սեռի կամ գենդերի պատկանելու զգացում, որը պարտադիր չէ, որ համընկնի ծննդյան ժամանակ հաստատված կենսաբանական սեռին:

Սեռական կողմնորոշում. մշտական հուզական, ռոմանտիկ, զգացմունքային և ինտիմ գրավչություն որոշակի սեռի կամ գենդերի մարդկանց նկատմամբ:

Նույնասեռական (հոմոսեքսուալ) սեռական կողմնորոշում. մշտական հուզական, ռոմանտիկ, զգացմունքային և ինտիմ գրավչություն նույն սեռի կամ գենդերի մարդկանց նկատմամբ:

Երկսեռական սեռական կողմնորոշում. մշտական հուզական, ռոմանտիկ, զգացմունքային և ինտիմ գրավչություն մեկից ավել սեռի կամ գենդերի մարդկանց նկատմամբ:

Տարասեռական (հետերոսեքսուալ) սեռական կողմնորոշում. մշտական հուզական, ռոմանտիկ, զգացմունքային և ինտիմ գրավչություն այլ սեռի կամ գենդերի մարդկանց նկատմամբ:

Հետերոնորմատիվություն. հղում այնպիսի մշակութային և սոցիալական պրակտիկաների, որտեղ տղամարդիկ և կանայք առաջնորդվում են հավատով և վարքով, որ հետերոսեքսուալությունը միակ ըմբռնելի սեռականությունն է: Այն նաև ենթադրում է հետերոսեքսուալության դիրքավորումն իբրև «նորմալ» լինելու միակ ձև և սոցիալական պարգևատրման հիմնական աղբյուր:

Ոչ հետերոնորմատիվ սեռականություն. հղում այնպիսի մշակութային և սոցիալական պրակտիկաների, որտեղ հետերոսեքսուալությունը չի դիրքավորվում իբրև սեռականության միակ հնարավոր դրսևորում: Այն ենթադրում է մի դրություն, որտեղ չեն ճնշում անհատների զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունները, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները այլ անհատների հետ:

Հոմոֆոբիա. վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն և/կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ: Հաճախ ներառում է նաև տրանսֆոբիա եզրը, որը բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր են, որոնք

հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության, գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զզվանքի, վախի և/կամ ատելության վրա:

Ինտերնալիզացված (ներքնայնացված) հոմոֆոբիա. իրադրություն, երբ լեսբի, գեյ և բիսեքսուալ անձինք վախենում են կամ զզվանք են տածում նույնասեռականության կամ բիսեքսուալության նկատմամբ:

Քվիր. քվիրը նախկինում դիտվել է որպես ոչ հետերոսեքսուալ կենսակերպ ունեցող անձանց հովանի եզրույթ, իսկ այնուհետև վերածվել հակահինքնության, որը բնութագրում է ցանկացած անձի այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք հակառակ են ընդունված նորմերին, լեգիտիմությանն ու դոմինանտությանը, և նպատակ են հետապնդում դիմադրելու, մերժելու, ապակառուցելու և այլաշրջելու նորմալությունն ու հետերոնորմատիվությունը որպես ճնշման համակարգեր:

ԼԳԲՏ+. հապավում՝ լեսբի (նույնասեռական կին), գեյ (նույնասեռական տղամարդ), բիսեքսուալ (երկսեռական), տրանս անձանց նկարագրելու համար: + նշանն օգտագործվում է եզրը ներառական դարձնելու համար բոլոր հնարավոր ոչ հետերոնորմատիվ ինքնություն ունեցող անձանց համար:

ԼԳԲՏ+ համայնք. լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր անձանց համայնք, որը միավորված է ընդհանուր հետաքրքրություններով, խնդիրներով և նպատակներով: Այն միատարր չէ և իր հերթին բաղկացած է տարբեր ենթահամայնքներից, խմբերից ու հանրույթներից: + նշանն օգտագործվում է եզրը ներառական դարձնելու համար բոլոր հնարավոր ոչ հետերոնորմատիվ ինքնություն ունեցող անձանց համար:

ԼԲՏ+ կանայք. լեսբի, բիսեքսուալ և տրանս նույնականացող կանայք: + նշանն օգտագործվում է եզրը ներառական դարձնելու համար բոլոր հնարավոր ոչ հետերոնորմատիվ ինքնություն ունեցող անձանց համար:

Խտրականություն. անհավասար կամ անարդար վերաբերմունք, որը կարող է պայմանավորված լինել տարբեր հիմքերով, օրինակ՝ տարիքով, էթնիկ ծագմամբ, հաշմանդամություն ունենալով, սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ:

Բռնություն. Բռնությունը հարկադրական տարբեր ձևերի կիրառումն է սպառնալիքի կամ գործողության միջոցով:

Գենդերային բռնություն. Բռնություն, որն առաջանում է գենդերային դերերից բխող ակնկալիքների և համապատասխան հարաբերություններում ուժի անհավասար բաշխման հետևանքով:

Ֆիզիկական բռնություն. Ֆիզիկական բռնություն է համարվում հարվածելը (ձեռքով, ոտքով), հրելը, ծեծելը և այլ գործողությունները, որոնք հանգեցնում են վնասվածքների և ֆիզիկական ցավի:

Հոգեբանական բռնություն. Հոգեբանական բռնություն է համարվում վիրավորանքը, ստորացումը, սպառնալիքը և ցանկացած այլ դրսևորումներ, որը հանգեցնում է բացասական հուզական հակազդեցության և հոգեբանական ցավի:

Տնտեսական բռնություն. Տնտեսական բռնություն է զբաղմունքի, աշխատանքի ընտրության կառավարումը, աշխատավարձի տնօրինումը, տնային տնտեսության վարման մեջ ձայնից զրկումը, ընտանեկան ֆինանսների տնօրինման գաղտնիությունը, գումարից զրկումը:

Սեռական բռնություն. Սեռական բռնությունը ոտնձգության ձև է՝ սեռական հարաբերությունների և սեռական բնույթի գործողություններ կատարելու հարկադրում՝ զոհի կամքին հակառակ (ներառյալ բռնաբարությունն ու ինցեստը):

Կանանց նկատմամբ բռնություն. Սեռով կամ գենդերով պայմանավորված բռնության բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս պատճառելուն, ինչպես նաև հասարակական կամ անձնական կյանքում բռնի գործողությունների կատարման սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը:

Զուգընկեր. Անհատ, ում հետ անձը ունի երկարատև մոտ անձնական և ռոմանտիկ հարաբերություն՝ ներառյալ հուզական կապվածությունը, անընդհատ շփումը, սեռական և սիրային հարաբերություններ, և որի հետ անձը նույնականանում է որպես զույգ՝ անկախ համակեցության հանգամանքից:

Ընտանեկան բռնություն. Ընտանեկան բռնությունը շարունակաբար իրականացվող ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության բոլոր գործողություններն են, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում՝ նախկին կամ ներկա ամուսինների, զուգընկերների միջև՝ անկախ նրանից, թե արդյոք բռնություն կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում:

Զուգընկերոջ կողմից բռնություն. Ինտիմ հարաբերություններում զուգընկերոջ կողմից այնպիսի վարքային դրսևորումները, որոնք մյուս զուգընկերոջը պատճառում են ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս՝ ներառյալ ֆիզիկական ագրեսիան, սեռական ոնձգությունը և բռնությունը, հոգեբանական ճնշումը և վերահսկող վարքագիծը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ընտանեկան բռնությունը հանդիսանում է ամենատարածված ու մտահոգիչ խնդիրներից մեկը, որի կանխմանն ուղղված պետական ու հասարակական քաղաքականությունների առաջնահերթության պահպանումը կարևոր հանգամանք է: ԼԲՏ+ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և նույնասեռ զուգընկերների շրջանում բռնության դեպքերը շարունակվում են արձանագրվել հասարակական կազմակերպությունների կողմից՝ որպես առկա շարունակական խնդրի դրսևորումներից մեկը:

Չնայած այդ հանգամանքի՝ արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրության մեջ բացակայում են ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության ու զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի մասին տվյալները: ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանիքի անդամների կողմից բռնության դեպքերը ՀՀ Ոստիկանության կողմից ներկայացվում են ընդհանուր վիճակագրության մեջ՝ առանց սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության կամ արտահայտման հիմքի նշմամբ: Բացի դրանից, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում դեռևս բացակայում է զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի սահմանումը, որը կարող է վերաբերելի լինել նաև նույնասեռ զույգերին: Օրենքում եզրույթի բացակայությունը նաև հանգեցնում է նրան, որ զուգընկերոջ կողմից բռնության դեպքերն ընդհանրապես չեն առանձնացվում պետական վիճակագրության մեջ՝ ներառյալ նույնասեռ զուգընկերների միջև հնարավոր դեպքերը:

Մյուս կողմից, ԼԲՏ+ կանանց նկատմամբ և զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի մասին խոսում են այլ երկրների տվյալները և փորձառությունը, որոնց կարգավորումները թույլ են տալիս տեղեկություն հավաքագրել հանդիպող դեպքերի մասին: ԼԲՏ+ կանանց և նույնասեռ զուգընկերների միջև բռնության հարցերը դիտարկելը կարևոր է, քանի որ այս խումբը բախվում է բռնության և խտրականության եզակի և բարդ ձևերի, որոնք հաճախ անտեսվում կամ թյուր են ընկալվում: ԼԲՏ+ և նույնասեռ զուգընկերները կարող են բախվել իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության (ՍԿԳԻ) կամ արտահայտման հիմքով խտրականության մի շարք ձևերի, որոնք կարող են հատվել այլ սոցիալական ինքնությունների հետ, ինչպիսիք են՝ ռասան, էթնիկ պատկանելությունը, սոցիալական կարգավիճակը, հաշմանդամություն ունենալը, տարիքը, և այլն, ինչը նրանց հատկապես խոցելի է դարձնում զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվելու առումով:

Նույնասեռ հարաբերություններում զուգընկերոջ կողմից բռնությունը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ՝ ներառյալ ֆիզիկական, սեռական, հոգեբանական և ֆինանսական բռնությունը: Ավելին, օգնություն և աջակցություն փնտրելու ժամանակ ԼԳԲՏ+ անհատները կարող են բախվել լրացուցիչ խոչընդոտների, ինչպիսիք են՝ խտրականությունը և խարանը առողջապահական ոլորտում, իրավական համակարգերում և սոցիալական ծառայություններ մատուցող պետական մարմիններում: Աջակցություն ստանալուն կարող է խոչընդոտել նաև հասարակության կողմից անձի մեկուսացված լինելը, ներքնայնացված ամոթի զգացումը կապված իր ՍԿԳԻ հետ և հիմնավորված վախի զգացումը բռնության ենթարկվելուց: Հաշվի առնելով վերոնշյալ յուրահատկությունները՝ կարևոր է հասկանալ, թե ինչպես են դրսևորվում և ինչպիսի հասանելիություն ունեն ԼԳԲՏ+ անձինք ու նույնասեռ զույգերը Հայաստանում առկա պաշտպանությանն ու աջակցության մեխանիզմներին:

Սույն հետազոտության հիմնական նպատակն է տարբեր կողմերից ուսումնասիրել ԼԲՏ+ կանանց և զուգընկերների միջև բռնության դրսևորումները հենց Հայաստանյան համատեքստում: Այն բաղկացած է երկու հիմնական մասից: Առաջին մասում ամփոփված է հիմնախնդրի հետ կապված միջազգային փորձի և առկա սակավ տվյալների հիման վրա տեղական փորձի դիտարկումը՝ հնարավորություն

ընձեռելու ավելի համապարփակ սահմանել հիմնախնդրի շրջանակը և առանձնահատկությունները: Երկրորդ մասում ներկայացված են Հայաստանում առկա իրավակարգավորումների և ԼԲՏ+ կանանց նկատմամբ ու զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի ամփոփ զեկույցը, օրինաչափությունների դուրսբերմանն ուղղված ուսումնասիրությունը՝ աջակցող օղակի շրջանակներում, և դրա արդյունքները:

Հետազոտության վերջում ներկայացված են առաջարկություններ՝ ուղղված ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան ու զուգընկերոջ կողմից բռնության կանխարգելմանը, առկա դեպքերին պատշաճ արձագանքմանը և բռնությունը վերապրած անձանց աջակցության տրամադրմանը: Առաջարկություններն ուղղված են տարբեր շահագրգիռ կողմերին՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններին և անհատ ակտիվիստներին, պետական մարմիններին, քաղաքացիական հասարակությանը և միջազգային գործընկերներին:

ՄԱՍ 1.

ԼԲՏ+ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ և ՆՈՒՅՆԱՍԵՌ ԶՈՒՅԳԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

1.1 ԲՌՆՈՒԹՅՈՒՆ. ԲՌՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

«Բռնություն» հասկացությունը ներառում է յուրաքանչյուր արարք, որի հիմնական նպատակն այլ անձի կամ անձանց վարքի վերահսկումն ու կառավարումն է, որը իրականացվում է սեփական կամքը այլ անձին կամ անձանց թելադրելով՝ առանց հաշվի առնելու նրա կամ նրանց հետաքրքրությունները, շահերը, ցանկությունները, զգացմունքները և այլն:

Առավել տարածված է համարվում բռնության տեսակների հետևյալ դասակարգումը՝

Ֆիզիկական բռնություն է համարվում ֆիզիկական անհարմարություն պատճառելը և ֆիզիկական վնասվածքներ հասցնելը: Այն ներառում է այնպիսի պահվածք, ինչպիսին են հրմշտոցը, թափահարությունը, հարվածելը, հրելը, ապտակելը, խեղդելը, մազերից քաշելը և այլ գործողությունները, որոնք հանգեցնում են վնասվածքների և ֆիզիկական ցավի:

Հոգեբանական բռնությունը վարքի այն մոդելն է, որը հանգեցնում է մեկ այլ անձի բացասական հուզական հակազդեցության և հոգեբանական ցավի: Հոգեբանական բռնությունը դրսևորվում է այլ անձի մտածելակերպի և վարքագծի պարբերական վերահսկողության, ինչպես նաև սպառնալիքի, կոպտության, ծաղրի, վիրավորանքի, մեկուսացնելու, ախտաբանական խանդի և համանման գործողությունների տեսքով:

Սեռական բռնությունն անձի կամքին հակառակ սեռական հարաբերությունների և սեռական բնույթի գործողություններ կատարելու հարկադրումն է (ընդհուպ մինչև բռնաբարություն): Այն կարող է դրսևորվել ինչպես կամքին հակառակ իրականացվող սեռական բնույթի հպումների ու շոյանքների, այնպես էլ սեռական ակտի տեսքով:

Տնտեսական բռնությունն ընտանիքում նյութական միջոցների կառավարումն է ընտանիքի գերիշխող անդամի կամ անդամների կողմից և այդ միջոցների նկատմամբ խիստ վերահսկողությունը: Դրսևորումները ներառում են զբաղմունքի, աշխատանքի ընտրության կառավարում, աշխատավարձի տնօրինում, տնային տնտեսության վարման մեջ ձայնից զրկում, ընտանեկան ֆինանսների տնօրինման գաղտնիություն, գումարից զրկում և այլն:

Ընտանեկան բռնության բոլոր տեսակներն ու ձևերը խիստ փոխկապակցված են:

1.2 ԼԲՏ+ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՆՈՒՅՆԱՍԵՌ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քանի որ զուգընկերները գտնվում են սիրային և ինտիմ հարաբերությունների մեջ, միասին կառուցում են պլաններ ապագայի մասին, միասին բնակվում են կամ վարում են կենցաղ, նույնասեռ զուգընկերներից բաղկացած ընտանիքները ևս բախվում են ընտանիքներին առնչվող խնդիրների հետ, անկախ այն հանգամանքից, որ Հայաստանի Հանրապետությունում նույնասեռ ամուսնությունները չեն գրանցվում և պետության պաշտոնական փաստաթղթերում նույնասեռ ընտանիքները չեն արձանագրվում:

Գաղտնիք չէ, որ ընտանեկան բռնության դինամիկան տարբերվում է բռնության այլ ձևերից: Բռնությունն իրականացվում է այն անձի կողմից, որին բռնության ենթարկվող անձը սիրում և վստահում է: Ընտանեկան բռնությունը հանդիսանում է երկարատև ուժի և վերահսկողության շղթայի օրինաչափության մաս՝ ստեղծելով կախվածություն, որն էլ բարդացնում է բռնության ենթարկվող անձի հեռանալու հնարավորությունը: Հազվադեպ չեն նաև այն դեպքերը, երբ ընտանեկան բռնությամբ ավարտվող հարաբերությունները սկսվում են ակնհայտորեն առողջ և երջանիկ հարաբերություններով: Փաստորեն, բռնության առաջացման և առաջընթացի (էսկալացիա) այս գործընթացը բարդացնում է բռնության ենթարկվող անձի զգացմունքները բռնարարի նկատմամբ և

դժվարացնում նրանից հեռանալը կամ օգնության դիմելը[1]:

Հոգեբանական տեսանկյունից ընտանեկան բռնությունը կարող է հանգեցնել դեպրեսիայի, անհանգստության, սննդային վարքի խանգարումների, ցածր ինքնագնահատականի, խուճապի, ալկոհոլի կամ թմրանյութերի օգտագործման, ինքնասպանության փորձերի և այլ հետևանքների: Ընտանեկան բռնությունը նաև էական ազդեցություն ունի զոհի սոցիալական միջավայրի վրա: Ընտանիքը, ընկերներն ու գործընկերները ռիսկի են դիմում, երբ փորձում են միջամտել կամ օգնել տուժողին՝ բռնի հարաբերություններից հեռանալու համար[2]:

ԼԲՏ+ կանանց և նույնասեռ զուգընկերների շրջանում բռնության արձանագրված դեպքերը լույս են սփռում որոշ չափով այն հանգամանքի վրա, որ պետության կողմից պաշտոնական վիճակագրություն չի վարվում, սակայն հասարակական կազմակերպություններն ու անհատ ակտիվիստները նույնասեռ զուգընկերների միջև բռնության դեպքերի ընթացիկ արձանագրումներ են կատարում: Սույն հետազոտության հենց երկրորդ մասը նպատակ ունի հավաքագրել խնդրի շուրջ առկա տվյալները:

1.3 ԼԲՏ+ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՎ ՆՈՒՅՆԱՍԵՌ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Սոցիալական և քաղաքական հետևանքներ

ԼԲՏ+ կանանց և նույնասեռ զուգընկերների նկատմամբ բռնությունը կարող է ունենալ ծանր սոցիալական և քաղաքական հետևանքներ՝ խորացնելով հասարակությունում լուսանցքայինացումը, խտրականությունը, անտեսանելիությունը և դժվարացնելով նրանց համար արդարադատության և աջակցության հասանելիությունը:

Առաջին հերթին ԼԲՏ+ անհատներն արդեն իսկ բախվում են լուսանցքայինացման և խտրականության՝ իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով: Բռնությունը կարող է սրել այս իրավիճակը և նրանց համար էլ ավելի նվազեցնել առողջապահական, բնակարանային, կրթության և աշխատանքի հնարավորությունների հասանելիությունը: Բռնությունը կարող է վախ և տարատեսակ հոգեբանական տրավմաներ առաջացնել ԼԲՏ+ անհատների շրջանում, ինչպիսիք են՝ անհանգստությունը, դեպրեսիան, հոգեկան առողջության այլ խնդիրները: Բռնության հանդեպ վախը կարող է դրդել ԼԲՏ+ անհատներին թաքնվել հանրությունից, ընկերներից, ընտանիքից, ինչն էլ ավելի անտեսանելի կդարձնի իրենց խնդիրներն ու դժվարությունները: ԼԲՏ+ անհատները կարող են բախվել արդարադատության անհասանելիության և այլ իրավական խոչընդոտների, երբ բռնության են ենթարկվում: Սա հատկապես ճիշտ է Հայաստանում և այն երկրներում, որտեղ նույնասեռ հարաբերությունները ճանաչված չեն կամ որտեղ չկան հակախտրական համապարփակ իրավակարգավորումներ և պաշտպանության մեխանիզմներ: ԼԲՏ+ անհատները կարող են չցանկանալ աջակցություն ստանալ իրավապահ մարմիններից, առողջապահական հիմնարկներից կամ այլուր՝ խտրականությունից վախենալով, կամ չհասկանալով, որ այն, ինչ իրենց հետ կատարվում է՝ բռնություն է: ԼԲՏ+ անհատների և նույնասեռ զուգընկերների նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների բացակայությունը կարող է դժվարացնել այս բռնությունը կանխելու և վերացնելու համար արդյունավետ քաղաքականություն և միջամտություններ մշակելը:

ԼԲՏ+ կանանց և նույնասեռ անձանց վրա ազդեցությունը

ԼԲՏ+ կանանց, ինչպես նաև նույնասեռ զույգերի միջև բռնությունը կարող է ունենալ ծանր և

[1] Women's Support Center NGO, "Guidelines for Domestic Violence Service Providers", 2016 https://www.womensupportcenter.org/assets/PDF%20publications/Guildles%20for%20domestoc%20Violence.pdf [մուտք գործած՝ հուլիս 2023թ.]
[2] Council of Europe, "Preventing and Combating Domestic Violence against Women: A learning resource for training law enforcement and justice officers", 2016 https://rm.coe.int/16805970c1 [մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

երկարատև հետևանքներ՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական առումներով (Մեսինգեր, 2011)[3] (Մասոն և ուրիշներ, 2014)[4]:

Բռնության որոշ հետևանքներ ներառում են՝

Ֆիզիկական և առողջական խնդիրներ ու վնասվածքներ. ԼԲՏ+ կանայք և բռնության ենթարկված նույնասեռ զույգերը կարող են ստանալ ֆիզիկական վնասվածքներ, այդ թվում՝ կապտուկներ, ոսկորների կոտրվածքներ և այլ ֆիզիկական վնասվածքներ:

Հոգեբանական հետևանքներ. անվստահության, անապահովության զգացում, ցածր ինքնագնահատական, ամոթի զգացում, մեղքի զգացում, թերարժեքության զգացում, վախի զգացում, շփման խանգարումներ, ճնշվածություն, ընկճախտ:

Հոգեբանական և հուզական տրավմաներ. բռնությունը կարող է նաև խորը ազդեցություն ունենալ անհատի հուզական բարեկեցության վրա: Հոգեբանական և հուզական վնասները ներառում են՝ մեկուսացվածություն, ինքնագնահատականի անկում, միայնության զգացում, դեպրեսիվ և սթրեսային հոգեվիճակներ, ծանր ապրումներ, հետտրավմատիկ սթրեսային խանգարում (ՀՏՍԽ) և այլն:

Վարքային խնդիրներ. ագրեսիա, անհամարժեք դաժանություն, թմրանյութերի կամ ալկոհոլի չարաշահում, սննդային վարքի խանգարումներ, քնի խանգարումներ, մեկուսացում կամ խնդիրներ միջանձնային հարաբերություններում:

Կախվածություններ ձեռք բերելու ռիսկ. բռնությունը կարող է ազդել վարքի վրա հանգեցնելով տարատեսակ կախվածությունների՝ թմրանյութերի օգտագործում, ալկոհոլի չարաշահում, տնտեսական լարված իրադրությունում՝ վիճակախաղերից կախվածություն ձեռք բերելու ռիսկ և այլն: ԼԲՏ+ կանայք, ովքեր ենթարկվել են զուգընկերոջ կողմից բռնության, ըստ վիճակագրական տվյալների ունեն ավելի մեծ հակվածություն թմրանյութերի օգտագործման և ալկոհոլի չարաշահման, քան բռնության չենթարկված ԼԲՏ+ կանայք (Լուկա և մյուսներ, 2018)[5]: Այնուամենայնիվ, կախվածությունները սերտորեն կապված են անձի հոգեվիճակի հետ և երբեմն չստանալով համապատասխան աջակցություն և մասնագիտական հոգեբանական օգնություն՝ անձինք կարող են դրսևորել ցավն ու դժվար իրավիճակից բխող ապրումները թմրեցնելու վարքագծեր:

Սեռական խնդիրներ. սեռական ցանկության գերակտիվացում, վագինիզմ (հեշտոցի մկանների ակամա ջղաձիգ կծկում, որի պատճառով անհնար է դառնում ներթափանցմամբ սեռական ակտը), ֆրիգիդություն (սեռական սառնություն՝ սեռական հարաբերության ժամանակ սեռական բավարարություն ստանալու կնոջ անընդունակություն):

ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՍՎ) ռիսկի բարձրացում. ԼԲՏ+ կանայք և բռնության ենթարկված նույնասեռ անձինք կարող են ՄԻԱՎ-ի և սեռավարակներով վարակվելու ռիսկի տակ լինել՝ բռնարարի կամ բռնարարների կողմից բռնությունը որպես հարկադրանքի և վերահսկողության գործիք օգտագործելու պատճառով:

Տնտեսական հետևանքներ. բռնությունը կարող է ունենալ նաև տնտեսական հետևանքներ, քանի որ այն կարող է հանգեցնել աշխատանքի, հետևաբար նաև աշխատավարձի կորստի, աշխատունակության նվազման և առողջապահական ծախսերի ավելացման:

Մեկուսացում և լուսանցքայնացում (մարգինալացում). ԼԲՏ+ կանայք և բռնության ենթարկված նույնասեռ հարաբերության մեջ գտնվող անձինք կարող են նաև բախվել սոցիալական խարանի և խտրականության, ինչը կարող է հանգեցնել մեկուսացման և մարգինալացման: Դա կարող է դժվարացնել նրանց համար հասանելի ռեսուրսները և աջակցությունը, որոնք անհրաժեշտ են

[3] Messinger M. Adam (2011). "Invisible victims: same-sex IPV in the National Violence Against Women Survey" https://pubmed.ncbi.nlm.nih.gov/20829231/ [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]
[4] Mason, T. B., Lewis, R. J., & Heron, S. L. (2014). Pathways from intimate partner violence to posttraumatic stress disorder in lesbian couples: The roles of rumination and posttraumatic cognitions. Journal of Family Violence, 29(5), 511-521.
[5] Luca Rolle, Guilia Giardina, Angela M.Caldarera, Eva Gerino and Piera Brustia (2018). "When Intimate Partner Violence Meets Same Sex Couples: A Review of Same Sex Intimate Partner Violence" https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC6113571/pdf/fpsyg-09-01506.pdf [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

բուժվելու, կազդուրվելու և վերականգնվելու համար:

Հարկ է նշել, որ կանանց նկատմամբ բռնությունները, ցավոք, ամենաշատը տեղի են ունենում ընտանիքում: Կանայք ավելի շատ են ենթարկվում ծեծի, ֆիզիկական բռնության և բռնաբարության ընտանիքի ներսում, քան ընտանիքից դուրս: Ընտանեկան բռնության՝ խիստ անձնական և ներընտանեկան խնդիր լինելու պատճառ ձևակերպելն է, որ խոչընդոտում է այդ երևույթի դեմ պայքարին: Հաճախ այն դիտվում է որպես «տան չորս պատի ներսում» կատարվող երևույթ, որը վերաբերում է միայն ընտանիքի անդամներին: Դրան գումարվում է այն հանգամանքը, որ նույնասեռ զուգընկերները չեն հանրայնացնում իրենց կյանքը: Ենթարկվելով բռնության զուգընկերների կողմից և հասարակության կողմից պախարակման և կրկնակի բռնության չենթարկվելու համար՝ ստիպ-ված են լինում լռել, հանդուրժել կամ չդիմել օգնության, որի հետևանքով ունենում են բազմաթիվ խնդիրներ. մինչդեռ խախտվում են նրանց մի շարք մարդու իրավունքները:

Պետության և հասարակության վրա ազդեցությունը

Նույնասեռ զույգերում բռնությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ ոչ միայն բռնության ենթարկվող անձանց վրա, այլև պետության և հասարակության վրա: Այս մասին փաստում են որոշ միջազգային աղբյուրներ՝ հիմնված փորձի վրա (Կեյն և Դուգլաս, 2013)[6]:

Մասնավորապես, ընտանեկան բռնությունը կարող է բարձրացնել սոցիալական ծառայությունների և առողջապահական համակարգի վրա ծանրաբեռնվածությունը: Բռնության ընթացքում հասցված ֆիզիկական վնասվածքները և տրավմաները կարող են հանգեցնել հասարակության առողջության պահպանման ծախսերի ավելացման: Բռնությունը կարող է նաև հանգեցնել հաշմանդամության առաջացմանը և քրոնիկական առողջական խնդիրներին, որն ավելացնում է պետության սոցիալական ապահովության և առողջության ապահովման ծառայությունների ծախսերը:

Մյուս կողմից, երբ բռնության ենթարկվող անձը չի աշխատում, կամ ենթարկվում է տնտեսական բռնության, կամ ցանկացած այլ տեսակի բռնության, ապա այն հանգեցնում է աշխատավարձերի կորստի և ընդհանուր առմամբ արտադրողականության և աշխատուժի նվազմանը, ինչն իր հերթին կարող է բացասական ազդեցություն ունենալ տնտեսության վրա:

Ինչպես նաև, ընտանեկան բռնությունը բացասական ազդեցություն կարող է ունենալ ընտանիքների և համայնքների վրա: Բռնության ականատես երեխաները, մեծանալով և դառնալով հասարակության անդամներ, ունենում են տարատեսակ հոգեբանական և վարքային խնդիրներ, հակված են լինում ինքնավնասման: Բացի այդ նրանք կարող են ունենալ ցածր ինքնագնահատական և ապագայում առողջ հարաբերություններ ձևավորելու դժվարություններ: Ընտանեկան բռնությունը կարող է նաև բարձրացնել հանցավորության մակարդակը և հանգեցնել այլ սոցիալական խնդիրների, ինչպիսիք են անօթևանությունը, թմրամիջոցների չարաշահումը և հոգեկան առողջության հետ կապված խնդիրները: Այս ամենն անուղղակիորեն բարձրացնում է նաև պետության՝ կալանավայրերի ֆինանսավորման ու սպասարկման ծախսերը, որոնք եթե առկա չլինեին կարող էին ուղղվել հասարակության զարգացման և ապահովման ավելի օգտակար ուղղություններով:

1.4 ԼԲՏ+ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՆՈՒՅՆԱՍԵՌ ԶՈՒԳԸՆԿԵՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿՆԱՐԿ

Չնայած այն հանգամանքին, որ ընդունված է կարծել՝ ընտանեկան բռնությունը բացառապես հետերոսեքսուալ հարաբերությունների խնդիր է, բազմաթիվ հետազոտություններ դուրս են բերել

[6] Kane, G. M., & Douglas, E. M. (2013). The impact of intimate partner violence on women's economic well-being. Journal of Marriage and Family, 75(2), 278-295.

բռնության առկայություն նույնասեռ զույգերի շրջանում նույնպես, և դեպքերի քանակը համեմատելի է (Թուրել, 2000)[7] կամ ավելի շատ է, քան տարասեռ զույգերի մոտ (Քելի և մյուսներ, 2012)[8]: Չնայած ԼԳԲՏ+ համայնքին պատկանող զույգերում ընտանեկան բռնության առկայությանը, այնուամենայնիվ, ԼԲՏ+ կանանց զույգերում հանդիպող ընտանեկան բռնության դեպքերը քննելիս կարևոր է հաշվի առնել սեռական փոքրամասնությունների սթրեսային գործոնների դերը և խտրականության առկայության հանգամանքը ոչ միայն հասարակության կողմից, այլև հենց ԼԳԲՏ+ համայնքի կողմից՝ պայմանավորված ներքնայնացված հոմոֆոբիայով: Սթրեսային գործոնի հասկացության մասին մանրամասնորեն խոսում է Մայերը, նշելով, որ այն կարելի է նկարագրել՝ այնպիսի գործոններ, որոնք յուրահատուկ են և լրացուցիչ բնույթ են կրում, և դրանք երբեք չեն կարող ունենալ այն անձինք, ովքեր խտրականացված համայնքից կամ խմբից դուրս են (Մայեր, 2012)[9]: Ինչպես ցանկացած անձ, այնպես էլ ԼԳԲՏ+ համայնքին պատկանող անձինք կրում են շրջապատի ներգործությունը, ներառյալ՝ հոգեբանական և հուզական ապրումների առաջացումը, ինքնության և ինքնարտահայտման ձգտումը, խտրականության ենթարկվելը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով, որին կարող է նաև գումարվել սոցիալական կարգավիճակը, սեռը, ռասսան կամ էթնիկ պատկանելությունը:

Այսպես, ԼԳԲՏ+ համայնքում հստակ կարող է դրսևորվել տարբերակված մոտեցում լեսբի, բիսեքսուալ և տրանս կանանց նկատմամբ, որը կարող է կապված լինել ԼԳԲՏ+ շարժման մեջ գեյ տղամարդկանց դերի և հասարակությունում ընդհանրապես տղամարդկանց դերի կարևորման և որոշակի կարծրատիպերի շուրջ պատկերացումների ձևավորման հետ (Լուկա և մյուսներ, 2018)[10]: Բացի այդ, ներքնայնացված հոմոֆոբիան (Ռեյնբոու նախագիծ, 2022)[11] զգալի դեր է խաղում միմյանց նկատմամբ խտրականության հարցում: Այս հանգամանքը կարևոր է, քանի որ վերոնշյալի հետևանքով ԼԲՏ+ համայնքի կանայք կարող են դժվարություններ ունենալ ապահով տարածք գտնելու իրենց հետ կատարվածի մասին խոսելու համար, ինչպես նաև, ընդհանրապես, ընդունելու և գիտակցելու, որ իրենց զուգընկերոջ վերաբերմունքն ընտանեկան բռնության տարր կամ տարրեր է պարունակում:

Հետաքրքրական է, որ մի շարք ԼԳԲՏ+ համայնքներում առկա է այն կարծրատիպը, որ օրինակ՝ եթե զուգընկերային բռնության զոհերը երկուսն էլ նույնասեռ տղամարդ են, ապա նրանց օգնելու կարիք չկա և նրանց հետ կատարվածը կարևոր չէ, քանի որ նրանք երկուսն էլ տղամարդ են, իսկ տղամարդիկ լինելով, ըստ կարծրատիպերի՝ ֆիզիկապես ուժեղ, գտնվում են, այսպես կոչված, հավասար հարթակի և կարողությունների վրա, հետևաբար նրանց «վեճը» հավասար է, և «անհնարին» է, որ մեկը մյուսի նկատմամբ բռնություն կիրառի (Ռոռբո, 2006)[12]: Այս կարծրատիպը կարող է բացասական դեր խաղալ հատկապես այն իրավիճակներում որտեղ բռնության ենթարկվող անձը տրանս տղամարդ է:

Ընդհանուր առմամբ ընտանեկան բռնությունը, ներառյալ նույնասեռ զուգընկերների կողմից բռնությունը, պատված է լռության շղարշով, քանի որ բռնության մասին բարձրաձայնելու դեպքում այն բարձրաձայնողին սպասվում են մեղադրանքներ, կրկնակի զոհացում և բացասական վերաբերմունք, որը բռնության ենթարկված անձը քաջ գիտակցում է և դրանցից խուսափելով փորձում է հաշտվել ու համակերպվել կամ ինքնուրույն լուծել խնդիրը (Լուկա և մյուսներ, 2018)[13]: Բռնության մասին ոստիկանություն հայտնելը ևս խնդրահարույց կարող է լինել, քանի որ իրավապահ համակարգը

[7] Susan C. Turell (2000). "A descriptive analysis of same-sex relationship violence for a diverse sample" https://link.springer.com/article/10.1023/A:1007505619577 [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]
[8] Robert J. Lewis, Robert J. Milletich, Michelle L. Kelley, Alex Woody (2012). "Minority Stress, Substance Use, and Intimate Partner Violence Among Sexual Minority Women" https://www.ojp.gov/ncjrs/virtual-library/abstracts/minority-stress-substance-use-and-intimate-partner-violence-among [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]
[9] Meyer, I. H., & Frost, D. M. (2013). Minority stress and the health of sexual minorities. https://psycnet.apa.org/record/2012-32754-018 [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]
[10] Luca Rolle, Guilia Giardina, Angela M.Caldarera, Eva Gerino and Piera Brustia (2018). "When Intimate Partner Violence Meets Same Sex Couples: A Review of Same Sex Intimate Partner Violence" https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC6113571/pdf/fpsyg-09-01506.pdf [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]
[11] Rainbow Project - The Charity Commission for Northern Ireland. Internalized Homophobia. 2022: https://www.rainbow-project.org/internalised-homophobia/ [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]
[12] Joanna Bunker Rohrbaugh (2006). "Domestic violence in same-gender relationships" https://www.researchgate.net/publication/264211350_Domestic_violence_in_same-gender_relationships [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]
[13] Luca Rolle, Guilia Giardina, Angela M.Caldarera, Eva Gerino and Piera Brustia (2018). "When Intimate Partner Violence Meets Same Sex Couples: A Review of Same Sex Intimate Partner Violence" https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC6113571/pdf/fpsyg-09-01506.pdf [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

բավականաչափ զգայուն մոտեցում չունի ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընդհանրապես, և ԼԲՏ+ կանանց նկատմամբ հատկապես (Գվադալուպե-Դիազ, 2013)[14]: Շատ անգամներ լեսբի կանայք, որոնք ենթարկվել են բռնության զուգընկերոջ կողմից չեն դիմել ոստիկանություն և չեն փնտրել իրավական պաշտպանություն կամ խորհրդատվություն, այլ փորձել են հեռանալ և ինքնուրույն դադարեցնել իրենց նկատմամբ բռնություններն ու հետապնդումները: Շեշտակի ընդգծվում է, որ ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար նախատեսված ապաստարանները պատրաստված չեն ընդունելու բռնության ենթարկված նույնասեռական անձանց, իսկ նրանց ապաստարանում տեղակայելու դեպքում առաջանում է բռնության ենթարկված անձի սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը բացահայտելու ռիսկ, որին նաև կարող է հետևել ապաստարանի մյուս բնակիչների և զգայունություն չունեցող ու չպատրաստված աշխատակազմի կողմից խտրականության ենթարկվելու ռիսկը (Բալզամ, 2008)[15]:

Բռնության ենթարկված տարասեռական և նույնասեռական անձանց իրավիճակները հաճախ կարող են հատվել և նույնանման յուրահատկություններ ունենալ: Հետևաբար, տարասեռական անձանց համար մշակված քաղաքականություններն ու աջակցության փաթեթները կարող են վստահաբար օգտակար լինել նաև նույնասեռական անձանց համար: Սակայն, ելնելով նրանից, որ կան այնպիսի հանգամանքներ, որոնք երբևէ չեն կարող լինել բռնության ենթարկված տարասեռական անձանց մոտ, այնուամենայնիվ կա հստակ կարիք ընդունելու ԼԲՏ+ կանանց հարմարեցված քաղաքականություններ ու ծառայություններ ԼԲՏ+ կանանց աջակցելու համար:

***

Այսպիսով, ԼԲՏ+ կանանց նկատմամբ և նույնասեռ զույգերի շրջանում բռնությունը միջազգային տիրույթում դրսևորվող խնդիր է, որից զերծ չի կարող լինել նաև Հայաստանյան հասարակությունը: Մասնավորապես, ԼԲՏ+ կանայք ավելի խոցելի են լինում բռնության դրսևորումների նկատմամբ՝ հանդիսանալով նաև խտրականության ենթարկվող անձինք, որն էլ իր հերթին սահմանափակում է առկա աջակցության մեխանիզմներին հասանելիությունը:

Մյուս կողմից, զուգընկերոջ կողմից բռնությունը բնորոշ է ինչպես տարասեռ զույգերին, այնպես էլ՝ նույնասեռ զույգերին: Չնայած դրսևորումների մի շարք նմանություններին՝ հարկ է առանձնացնել նույնասեռ զույգերին բնորոշ որոշ առանձնահատկություններ, որոնցից է նույնասեռ զույգընկերների կողմից բռնության դրսևորումների ճանաչելու դժվարությունները՝ պայմանավորված հասարակությունում առկա կարծատիպերով և հասարակության կողմից ընդունվելու ցանկության միտումներով: Ինչպես նաև, նույնասեռ զույգերի շրջանում յուրատիպ դրսևորում է զուգընկերոջ կողմից սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության բացահայտման սպառնալիքը, որն էլ հենց ԼԳԲՏ+ անձանց հիմնական խոցելիություններից մեկն է:

Չնայած առկա միջազգային տվյալներին ու փորձառությանը՝ Հայաստանում առկա են բացեր ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության և նույնասեռ զույգերի շրջանում բռնության հավաքագրման ու հետազոտման առումով: Հետևաբար, մի կողմից կարևոր է դիտարկել Հայաստանում արձանագրված դեպքերի պատկերը և ԼԳԲՏ+ անձանց աջակցություն տրամադրող հասարակական ու մասնագիտական դաշտերի փորձառությունը, իսկ մյուս կողմից՝ երկրում գոյություն ունեցող իրավական պաշտպանության հնարավորությունները և վերջիններիս առկայության դեպքում դրանց մեխանիզմների կիրառելիությունը, հնարավորությունները և բացերը: Սույն զեկույցի երկրորդ մասը միտված է հավաքագրել առաջնային տեղեկություն հենց վերոնշյալ հարցերի վերաբերյալ:

[14] Xavier L. Guadalupe-Diaz & Jonathan Yglesias (2013). “Exploring perceptions of domestic violence law by lesbians, gays and bisexuals” https://www.plu.edu/gender-equity/wp-content/uploads/sites/219/2014/11/guadalupediaz_yglesias_2013.pdf [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

[15] Kimberly F. Balsam (2008). “Nowhere to hide: lesbian battering, homophobia, and minority stress” https://www.tandfonline.com/doi/abs/10.1300/J015v23n03_03 [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

ՄԱՍ 2.

ԼԲՏ+ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՆՈՒՅՆԱՍԵՌ ԶՈՒՅԳԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն բաժնում ներկայացված հետազոտությունը ***նպատակ*** ունի դիտարկել ԼԲՏ+ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և նույնասեռ զույգերի շրջանում առկա բռնության դեպքերը ու միտումները Հայաստանում՝ հավաքագրելով հնարավորության սահմաններում բազմակողմանի ու հասանելի առաջնային տեղեկություն:

Քանի որ Հայաստանում բացակայում են ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության և նույնասեռ զույգերի շրջանում բռնության պաշտոնական տվյալներ կամ համակարգված հետազոտություններ, ապա սույն հետազոտությունը պիլոտային է՝ հասկանալու կարգավորման իրավական դաշտի շրջանակը, արձանագրված դեպքերի առկայությունը, աջակցություն տրամադրող հասարակական կամ մասնագիտական դաշտի փորձառությունն այս հարցերում: Այն նպատակ ունի սահմանել նաև հետագա հետազոտությունների և կարիքների դուրսբերման շրջանակը:

Հետևաբար, հետազոտության ***կոնկրետ նպատակներ*** են սահմանվել՝

1. Ուսումնասիրել Հայաստանի օրենսդրական դաշտի, իրավական ու համակարգային կարգավորումների առկայության ու կիրառելիության հարցերն ու իրավիճակը ընդհանուր առմամբ ԼԲՏ+ կանանց իրավական պաշտպանության, և ավելի կոնկրետ՝ ԼԲՏ+ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության ու նույնասեռ զույգերի շրջանում բռնության տեսանկյունից,
2. Ամփոփել վերջին տարվա ընթացքում փաստագրված ԼԲՏ+ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և նույնասեռ զույգերի շրջանում բռնության դեպքերը,
3. Ուսումնասիրել հասարակական ու մասնագիտական դաշտերում նույնասեռ զույգերի շրջանում բռնության դեպքերի հետ աշխատանքի փորձառությունը, պատկերացումները և միտումները:

Հետազոտական մեթոդների, ուսումնասիրության շրջանակի և ընտրանքի նկարագրություն

Պայմանավորված սահմանված կոնկրետ նպատակներով՝ հետազոտության ընթացքում օգտագործվել են բովանդակության վերլուծության, արձանագրված դեպքերի հավաքագրման, անհատական փորձագիտական հարցազրույցների մեթոդները:

- *Ներպետական օրենսդրական և իրավական կարգավորումների վերլուծություն*

Բովանդակային վերլուծության միջոցով ուսումնասիրվել են ներպետական օրենսդրությունը և իրավակարգավորումները, որոնք վերաբերում են երկրում առկա իրավական պաշտպանության կարգավորումներին՝ վերաբերելի նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքին: Մասնավորապես, վերլուծվել են նաև երկրում առկա ընտանեկան բռնությանը և զուգընկերների շրջանում բռնությանը վերաբերելի իրավակարգավորումները:

- *Արձանագրված դեպքերի ուսումնասիրություն և ամփոփում*

Արձանագրվող դեպքերն առնչվում են ԼԲՏ+ կանանց նկատմամբ ընտանեկան բռնությանը և նույնասեռ զույգերի շրջանում բռնությանը՝ փաստագրված նախորդ տարվա ընթացքում՝ 2022թ.-ին ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների իրադրությանը վերաբերելի զեկույցներում կամ արձանագրված հասարակական կազմակերպությունների կողմից: Մասնավորապես, սույն հետազոտության շրջանակում դիտարկվել են «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից արձանագրված դեպքերը մասնագիտական աջակցության տրամադրման՝ իրավաբանական և սոցիալական աշխատողի մասնագիտական ծառայությունների շրջանակներում:

- *Հասարակական ու մասնագիտական դաշտերում մասնագետների հետ փորձագիտական հարցազրույցների իրականացում*

Իրականացվել են անհատական փորձագիտական հարցազրույցներ ԼԳԲՏ+ անձանց մասնագիտական և ոչ մասնագիտական աջակցություն տրամադրող կազմակերպությունների մասնագետների կամ աշխատակիցների հետ: Մասնավորապես, հարցազրույցներն իրականացվել են իրավաբան, հոգեբան, սոցիալական աշխատող մասնագետների, հավասարը հավասարին խորհրդատուների ու համայնքային աշխատակիցների հետ:

Հարցազրույցները նպատակ ունեին դուրս բերել փորձագետների պատկերացումները նույնասեռ զույգերի շրջանում բռնության մասին ու հասարակության կողմից ազդեցությունները, իրենց փորձառությունը դեպքերի հետ աշխատանքում և միտումների մասին դիտարկումները, ինչպես նաև՝ զուգընկերների շրջանում բռնության կանխմանն ուղղված հնարավոր տարբերակները և լուծումները:

Հետազոտության խոչընդոտներ եվ սահմանափակումներ

Սույն հետազոտությունը զերծ չի մեթոդաբանական խնդիրներից և սահմանափակումներից, ինչը մեծապես կապված է հետազոտվող թեմայի և երևույթի բնույթի հետ:

- *Երևույթի ոչ հանրային բնույթը*

Զուգընկերների միջև հարաբերությունները մասնավոր են և հանրային աչքից հեռու, ինչը նշանակում է «փակ դռների հետևում» տեղի ունեցող բռնության խնդիրը չի կարող ուղղակիորեն դիտարկվել: Այս հետազոտության սահմանափակումներից մեկն ամբողջ Հայաստանում խորին և մանրակրկիտ հետազոտություն անցկացնելու անհնարինությունն է: Հետևաբար, սույն հետազոտությունը հանդիսանում է միայն առկա առաջնային տվյալների հավաքագրում:

- *Բռնության ենթարկված անձանց հասանելիությունը և ռեսուրսների սահմանափակում*

Հետազոտությունն օգտագործել է «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից արձանագրված դեպքերը, ինչը մեծապես սահմանափակում է ամբողջ Հայաստանում նույնասեռ զուգընկերների միջև բռնության միտումները դուրս բերելու և իրավիճակը նկարագրելու հնարավորությունը: Չնայած այդ հանգամանքին, կազմակերպությունն ունի բազմամյա փորձ՝ 2007 թ.-ից սկսած զգալի հասանելիություն ԼԳԲՏ+ անձանց համայնքին, իսկ 2019թ. և 2022թ.-ից՝ համապատասխանաբար Լոռու և Շիրակի մարզերի ԼԳԲՏ+ համայնքներին:

Հետազոտությունում ներգրավված անձանց և տվյալների պաշտպանություն

Քանի որ հետազոտության թեման վերաբերում է Հայաստանում բարձր խոցելիություն ունեցող և խտրականության ու բռնության ռիսկի տակ գտնվող մարդկանց՝ ԼԳԲՏ+ անձանց, արձանագրված դեպքերը ներկայացված են առանց անձնական տվյալների՝ խուսափելու անձանց ճանաչելիությունից: Բացի այդ, փորձագիտական հարցազրույցի տվյալները նույնպես ներկայացված են ընդհանրական վերլուծությամբ՝ խուսափելու փորձագետների և իրենց շահառուների նույնականացումից:

2.2 ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունից և բռնությունից պաշտպանության առկա իրավական մեխանիզմները Հայաստանում

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն արգելում է խտրականությունը՝ տրամադրելով պաշտպանված հիմքերի ոչ սպառիչ ցանկ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի

համաձայն՝ խտրականությունը սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկական կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, սեփականության կարգավիճակի, ծննդյան, հաշմանդամության, տարիքի կամ այլ անձնական կամ սոցիալական հատկանիշի հիմքով, արգելվում է[16]: Թեև որոշ օրենսդրական ակտեր պարունակում են հակախտրական դրույթներ[17], դրանք չեն նախատեսում պաշտպանված հիմքերի սպառիչ ցանկ՝ ուղղակիորեն չնշելով սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը: Միևնույն ժամանակ, բացակայում են խտրականությունից արդյունավետ և համապարփակ պաշտպանություն նախատեսող իրավական մեխանիզմները: Չնայած տեղական և միջազգային կազմակերպությունների առաջարկներին[18], չկա առանձին օրենք, որով կնախատեսվի խտրականության ու դրա տեսակների սահմանումը, խտրականության դեպքերի քննության շրջանակը, առանձնահատկություններն ու դրա արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ: Այսինքն, չկան խտրականությունից տուժած անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, իսկ այն դեպքում, երբ խտրականությունը դրսևորվել է տուժողի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով, ապա դեպքի քննությունն ամբողջությամբ կախված է իրավակիրառ մարմնի հայեցողությունից:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ 2022թ-ին ուժի մեջ է մտել ՀՀ քրեական նոր օրենսգիրքը[19], որի 203-րդ հոդվածով քրեականացվել է խտրականությունը: Միևնույն ժամանակ, այս հոդվածի կիրառման ժամկետը բավարար չէ եզրակացնելու համար, թե խտրականության որ ձևերի և ինչ ծանրության դեպքում է վերաբերմունքը հանգեցնում քրեական պատասխանատվության: Հետևաբար, դեռ վաղ է գնահատել դրա արդյունավետությունը:

Նախկինում, 2003թ-ին ընդունված քրեական օրենսգիրքը, որը գործում էր մինչև 2022թ-ի հուլիս ամիսը, 143-րդ հոդվածի ուժով քրեական պատասխանատվություն էր նախատեսում անձանց իրավահավասարությունը խախտելու համար, ինչը սակայն երբեք չի կիրառվել գործնականում խտրականության կամ ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեպքում:

Կարևոր է հասկանալ, թե ինչ իրավական պաշտպանության միջոցներ է նախատեսում քրեական օրենսգիրքը այն դեպքում, երբ տուժողի անձնական հատկանիշի հանդեպ ատելությամբ պայմանավորված արարքը քրեորեն պատժելի է:

ՀՀ քրեական օրենսդրությունը չի սահմանում ատելության հողի վրա կատարված հանցագործության հետ կապված որևէ հիմնական հասկացություն, ինչպիսիք են ատելության, ատելության հիմքով հանցագործության սահմանումը, պաշտպանված հատկանիշները, ինչպես նաև նման հանցագործությունների հետաքննության, պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները: Չկան կոնկրետ մեխանիզմներ՝ ապահովելու ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների նույնականացումը և իրականացնելու համապարփակ հետաքննություն՝ բացահայտելով հանցագործների դրդապատճառները: Գործող օրենսդրական մեխանիզմները բավարար չեն ատելության հողի վրա կատարված հանցագործությունների տուժողների նկատմամբ համաչափ իրավական պաշտպանություն երաշխավորելու համար:

Այնուամենայնիվ, այս ուղղությամբ ևս ՀՀ նոր քրեական օրենսգիրքն ունի առաջընթաց: Մասնավորապես, Օրենսգրքի 71-րդ հոդվածը, որը նախատեսում է քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները, առավել ծանր պատժի հիմք է սահմանել հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ

[16] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն. https://www.primeminister.am/hy/constitution/ [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

[17] Վահե Գրիգորյան, Արա Ղազարյան, Իրավական հետազոտություն խտրականության դեմ առանձին օրենքի անհրաժեշտության շուրջ. http://www.justice.am/storage/uploads/k1k_1HRAP.pdf [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

[18] Համապարփակ և արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմներ նախատեսող խտրականության դեմ օրենքի ընդունման անհրաժեշտությանն անդրադարձել են մի շարք մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմինների մեխանիզմներ, ինչպիսիք են, օրնակ՝ ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկումը. https://www.un.am/up/library/A_HRC_WG.6_35_L.7_Armenia.pdf; ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը. https://www.osce.org/odihr/434882 , ՄԱԿ-ի այլ մեխանիզմներ. https://www.ohchr.org/en/countries/enacaregion/pages/amindex.aspx [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

[19] ՀՀ Քրեական օրենսգիրք. https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080 [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը: Հոդվածի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված քրեորեն պատժելի արարքների պարագայում ևս արարքը պետք է որակվի որպես ծանրացնող հանգամանքներում կատարված հանցագործություն: Հետևաբար, կրկին, այս պարագայում ևս ԼԳԲՏ+ անձանց շահերի պաշտպանությունը կախված է օրենքի կիրառումից և իրավակիրառ մարմինների դերը որոշիչ է արդյունավետ, լրիվ և բազմակողմանի քննություն իրականացնելու հարցում: Նախկինում՝ մինչև նոր քրեական օրենսգրքի ընդունումը, պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները նախատեսող նմանաբովանդակ հոդվածը որպես ատելության շարժառիթ էր նախատեսում միայն էթնիկ, ռասայական և կրոնական պատկանելությունը: Այսինքն ԼԳԲՏ+ անձանց հանդեպ ատելությամբ պայմանավորված հանցանք-ները այս հոդվածի ուժով չէին կարող որակվել որպես ծանրացնող հանգամանքներում կատարված և հանգեցնել առավել խիստ պատասխանատվության: Հետևաբար, իրավակիրառ պրակտիկայում նոր իրավակարգավորումների արդյունավետությունը գնահատել դեռ վաղ է:

Միաժամանակ, ծանրացնող հանգամանքը պետք է նախատեսվի օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածում, որպեսզի այն դիտարկվի այդ հոդվածով արգելված արարքը քննելիս: Սա ևս մեկ գործոն է, որը նեղացնում է ծանրացուցիչ հանգամանքների կիրառման շրջանակը: Այնուամենայնիվ, նոր քրեական օրենսգիրքը այս առումով ևս կարելի է դրական տեղաշարժ համարել: Մասնավորապես, այն արարքները, որոնք առավելապես տեղի են ունենում ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ և նախատեսված են քրեական օրենսգրքի հատուկ մասում, պարունակում են առավել խիստ պատժատեսակի նախատեսման հնարավորություն այն դեպքում, եթե կատարվել են անձի որևէ հատկանիշով պայմանավորված ատելության կամ թշնամանքի հողի վրա: Այդպիսիք են, օրինակ, ֆիզիկական ներգործությունը, հոգեբանական ներգործությունը, սպառնալիքը, առողջությանը վնաս պատճառելը, խոշտանգումները, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները, գույքային վնաս պատճառելը:

Չնայած նրան, որ ատելության հողի վրա կատարված հանցագործություններից տուժած անձինք առավել խոցելի են և ունեն առանձնակի զգայուն վերաբերմունքի կարիք, Հայաստանում առկա չէ տուժողների աջակցության հատուկ մեխանիզմ, որի միջոցով կապահովվի անհրաժեշտ աջակցող ծառայությունների տրամադրումը, ինչպիսիք են հոգեբանական, սոցիալական աշխատողի և այլն:

ԼԳԲՏ+ անձանց հանդեպ խտրականության ու տարատեսակ հանցագործությունների խթաններից է ատելության խոսքը, որի առավել ծանր դրսևորումները՝ խտրականության և բռնության հրապարակային կոչերը, տարբեր երկրներում սկսել են պատասխանատվության ենթարկվել, ընդհուպ մինչև՝ առաջացնելով քրեական պատասխանատվություն: Նախկինում ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը նախատեսում էր քրեական պատասխանատվություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն, թշնամանք կամ անհանդուրժողականություն տարածելու համար, ինչը, այնուամենայնիվ, չէր կարող կիրառվել սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով ատելություն կամ թշնամանք տարածելու դեպքում: Նոր քրեական օրենսգրքում վերափոխված բովանդակության հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ռասայի, ազգի, էթնիկական կամ սոցիալական ծագման, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի կամ այլ հիմքերի վրա անձի կամ խմբի նկատմամբ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամություն հրահրելուն կամ քարոզելուն ուղղված խոսքի, ինչպես նաև այդ նպատակով նյութերի կամ առարկաների տարածման համար:[20]

Քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում նաև անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ

[20] ՀՀ Քրեական օրենսգիրք, Հոդված 329 https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080 [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար:[21] Չնայած նրան, որ այս կարգավորումը գործել է երկու տարի մինչև նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելը, այն դեռևս չի կիրառվել ԼԳԲՏ+ անձանց հանդեպ բռնության կոչերի պարագայում:

Ընտանեկան և զուգընկերների շրջանում բռնության ներպետական իրավակարգավորումները

2017թ-ին ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը[22], որը չի կարող համարվել նույնասեռ հարաբերություններում գտնվող անձի պաշտպանություն զուգընկերոջ կողմից դրսևորված բռնությունից՝ դիտարկվելով որպես ընտանեկան բռնություն: Այսինքն, չնայած նրան, որ այդպիսի դեպքերում կիրառելի են ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնության համար քրեական պատասխանատվություն նախատեսող քրեաիրավական դրույթները, նույնասեռ զույգերի դեպքում, բռնարար զուգընկերոջ նկատմամբ չեն կարող կիրառվել ընտանեկան բռնության կանխարգելման և պատասխանատվության առանձնահատուկ մեխանիզմները, որոնք նախատեսված են ընտանեկան բռնության դեմ վերոնշյալ օրենքով: Դեռևս օրենքի նախագծի մշակման փուլում առաջարկվել է նախատեսել նաև «զուգընկեր» բառը, որը հնարավորություն կտա նույնասեռ զույգերին ևս օրենքի ամբողջ գործիքակազմով պաշտպանվել ընտանեկան բռնությունից:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան[23] նախատեսում է բռնությունից պաշտպանություն ոչ միայն ամուսինների կողմից, այլ նաև զուգընկերոջ կողմից՝ հետևյալ ձևակերպմամբ. «ընտանեկան բռնություն»՝ նշանակում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում: Վերոնշյալ կոնվենցիան ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կողմից, սակայն դեռևս չի վավերացվել: Կոնվենցիան ի վերջո վավերացնելով, պետությունը պարտավորություն կստանձնի օրենսդրական և այլ միջոցներով պաշտպանել անձանց նաև զուգընկերների կողմից դրսևորված ընտանեկան բռնությունից: Այդ պարագայում, առաջին հերթին պետք է լրացման ենթարկվի ընտանեկան բռնության մասին վերոնշյալ օրենքը՝ այն արդյունավետ դարձնելու համար:

2.3 ԼԲՏ+ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՒՅՆԱՍԵՌ ԶՈՒՅԳԵՐՈՒՄ ԶՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Նախորդ բաժնում դիտարկված օրենսդրական ներկայիս կարգավորումների համատեքստում ԼԳԲՏ+ անձանց՝ ներառյալ ԼԲՏ+ կանանց շրջանում դեպքերը արձանագրվում են միայն ընտանիքի անդամների կողմից բռնության առկայության և իրավապահ մարմիններին դիմելու դեպքում, իսկ զուգընկերների կողմից բռնության դեպքերը, ոչ միայն ԼԲՏ+ կանանց շրջանում, այլ նաև ցանկացած

[21] ՀՀ Քրեական օրենսգիրք, Հոդված 330 https://www.arlis.am/documentview.aspx?docID=153080 [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]
[22] ՀՀ օրենք ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672 [մուտք գործած՝ հուլիս 2023թ.]
[23] Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence Istanbul, 11.V.2011 https://rm.coe.int/168008482e [մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

նույնասեռ զույգի դեպքում, չեն արձանագրվում օրենսդրական բացի պատճառով: Այնուամենայնիվ, նույնիսկ այն պարագայում, երբ իրենց զուգընկերոջ կողմից բռնության առկայության դեպքում ԼԳԲՏ+ անձինք դիմում են իրավապահ մարմիններին, դեպքերը չեն դիտարկվում որպես ընտանեկան բռնության դեպքեր: Հարկ է նշել, որ ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերում անձինք սովորաբար խուսափում են դիմել իրավապահ մարմիններին՝ կրկնազոհացումից ու խտրականությունից խուսափելու համար կամ չհամարելով, որ առկա պաշտպանության մեխանիզմները կկանխեն բռնությունը: Ավելին, իրավապահ մարմիններում չի վարվում առանձին վիճակագրություն՝ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնությանը վերաբերելիության նշումով, երբ ԼԳԲՏ+ անձինք դիմում են ընտանեկան բռնության հարցով:

Այնուամենայնիվ, հասարակական կազմակերպություններն այն օղակներն են, որտեղ տեղի է ունենում ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության՝ ներառյալ զուգընկերների կողմից բռնության դեպքերի արձանագրումը, ընդ որում՝ ոչ միշտ է, որ հասարակական կազմակերպությունները վարում են առանձին վիճակագրություն հենց ընտանեկան բռնության՝ ներառյալ զուգընկերների կողմից բռնության դեպքերով: Հայաստանյան քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպություններ իրականացնում են ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների և խտրականության դեպքերի արձանագրում՝ նշելով ընտանիքի կողմից բռնության առկայության մասին[24], սակայն ԼԲՏ+ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի առանձին արձանագրում իրականացնում է միայն «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Փինք)՝ ամփոփելով իրավախախտումների տարեկան զեկույցներում[25] կամ դեպքերի առանձին արձանագրմամբ:

Հարկ է նշել, որ 2013թ.-ից Փինքն իրականացնում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեպքերի համակարգված արձանագրում՝ մասնագիտական ծառայություններին հարյուրավոր դիմումների ու հանրային մշտադիտարկման արդյունքում արձանագրելով տարեկան միջինում 40 իրավախախտման դեպք: 2017թ. ՀՀ-ում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի[26] ընդունումից հետո Փինքը սկսել է իրականացնել նաև ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ՝ ներառյալ ԼԲՏ+ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի առանձին արձանագրում ՝ ներառելով «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում» տարեկան զեկույցում, որտեղ տարեկան կտրվածքով ամփոփվում են ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ իրավախախտումները: ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերի առանձնացումը նպատակ ուներ նաև մատնանշել դեպքերի առկայությունը և օրենքի կիրառելիության հարցերը ԼԳԲՏ+ անձանց դեպքում:

Սկսած 2017թ.-ից միայն Փինքին հասել են դիմումներ, և արձանագրվել են ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության 60 դեպքեր (2017թ.՝ 8 դեպք, 2018թ.՝ 4 դեպք, 2019թ.՝ 8 դեպք, 2020թ.՝ 17 դեպք, 2021թ.՝ 17 դեպք, 2022թ.՝ 6 դեպք)[27], որից շուրջ կեսը (27 դեպք) ԼԲՏ+ կանանց նկատմամբ:

Սույն դեպքերը միայն հանդիսանում են ընտանիքի անդամների կողմից շարունակական բռնության դեպքեր՝ ներառելով ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական բռնության տարբեր դրսևորումներ: Այդ դրսևորումները կրում են շարունակական բնույթ և կարող են լինել տարբեր ձևերով ու ուժգնությամբ:

[24] ԻՐԱՎԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ «ՏԱՆՍԳԵՆԴԵՐ ԼԳԲԻՔ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՅԼ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (2021 – 2022թթ.). «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն https://shorturl.at/mDFNS [մուտք գործած՝ հուլիս 2023թ.]
Իրավական զեկույց (2022թ.) Բազմազանություն սոցիալ-մշակութային, իրավապաշտպան հասարակական կազմակերպություն https://divercity.am/legal-report/?lang=hy [մուտք գործած՝ 2023թ. հուլիս]

[25] ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ (2017-2022թթ.) «Փինք» իրավապաշտպան ՀԿ https://www.pinkarmenia.org/publications/report/ [մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

[26] ՀՀ օրենք ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672 [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

[27] ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ (2017-2022թթ.) «Փինք» իրավապաշտպան ՀԿ https://www.pinkarmenia.org/publications/report/ [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

Այդպիսի դրսևորման օրինակներ են, երբ ընտանիքի անդամները բռնության միջոցով փորձում են «փոխել» զավակի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը, փակի տակ են պահում, կտրում հաղորդակցության տարբեր միջոցներից, սահմանափակում ֆինանսական ռեսուրսները, հոգեբանական ճնշում գործադրում, նվաստացնում արժանապատվությունը, ֆիզիկական ծեծի ենթարկում, սպառնում իրենց կամ իրենց ընկերներին կամ զուգընկերներին վնաս հասցնել կամ սպանել և այլն:

Հարկ է նշել, որ նույնասեռ զույգում զուգընկերոջ կողմից բռնության դեպքերը սկսվել են արձանագրվել կազմակերպության կողմից միայն 2022թ.-ից, երբ կազմակերպության մասնագետները սկսել են իրականացնել նաև լրացուցիչ դիտարկումներ զուգընկերոջ կողմից բռնության առկայության մասին՝ անկախ անմիջական այդ հարցով դիմելու հանգամանքից:

Ստորև ամփոփված են Փինքի կողմից 2022թ.-ի ընթացքում արձանագրված ընտանեկան բռնության դեպքերը՝ վերջիններիս առանձնահատկությունների մասին բովանդակային պատկերացում կազմելու համար: Դեպքերը ներառում են ինչպես ընտանիքի անդամների կողմից ԼԲՏ+ կանանց նկատմամբ շարունակական բռնության դեպքերը, այնպես էլ՝ նույնասեռ զույգում զուգընկերոջ կողմից շարունակական բռնության դեպքերը: 2022թ. արձանագրված ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ 6 ընտանեկան բռնության դեպքերից 3-ը եղել են ԼԲՏ+ կանանց նկատմամբ[28]:

ԼԲՏ+ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության դեպքեր

Բիսեքսուալ կնոջ ծնողները տեղեկացել են նրա սեռական կողմնորոշման մասին՝ տեսնելով նրա անձնական նամակագրությունը և լուսանկարները: Դրանից հետո ծնողները նրան փակի տակ են պահել իր կամքին հակառակ, շուրջ չորս ամիս թույլ չեն տվել դուրս գալ տնից: Այդ ընթացքում կտրել են նրա մազերը, ֆիզիկական բռնություն են գործադրել, քաշքշել են: Հայրը հոգեբանական ճնշում է գործադրել նրա նկատմամբ. պարբերաբար վիրավորական արտահայտություններ է հնչեցրել՝ կապված նրա սեռական կողմնորոշման հետ, ինչպես նաև սպառնացել է, որ կվնասի նրա զուգընկերուհու երեխային, քանի որ գիտի սովորելու վայրը և կսպանի նրան: Բացի այդ, նրան փորձել են «բուժել»՝ փոխել սեռական կողմնորոշումը՝ հոգեբույժի մոտ տանելով:

Նույնասեռական կնոջ ընտանիքի անդամները տեղեկացել են նրա սեռական կողմնորոշման մասին. այդ պատճառով փորձել են նրան տանը փակի տակ պահել՝ զրկելով կապի միջոցներից: Սակայն նա փախել է տնից, և ընկերուհիների հետ գնացել զբոսայգի: Տուժողի հայրը գնացել է զբոսայգի՝ փորձելով աղջկան ուժի գործադրմամբ տանել տուն, սակայն վերջինս դիմադրել է և չի ցանկացել իր հոր հետ գնալ: Հայրը, ուժի գործադրմամբ հարվածելով տուժողի դեմքին, պարանոցին և ողնաշարին, նրան քաշելով տարել է մեքենայի մոտ, հայհոյանքներ է հնչեցրել տուժողի ընկերուհիների հասցեին: Տուժողի հայրը բռնություն է գործադրել նաև տուժողի ընկերուհիների նկատմամբ, ովքեր փորձել են տուժողին օգնել: Հայրը հարվածել է ընկերուհիներից մեկին, ում բերանից սկսել է արյուն հոսել: Այնուհետև, տուժողը հոր ձեռքերից կարողացել է փախչել, իսկ ընկերուհիներից մեկը ահազանգել է ոստիկանություն:

Բիսեքսուալ աղջկա ընտանիքի անդամները նկատել են, որ նա շփվում է ոչ հետերոնորմատիվ արտաքինով անձանց հետ: Ընտանիքի անդամները փորձել են աղջկան արգելել շփվել իր ընկերների հետ, ասել են, որ նրանք վատ միջավայր են ստեղծում, բացասաբար են անդրադառնում աղջկա

[28] Դեպքերի նկարագրությունները վերցված են Փինք ՀԿ-ի Տարեկան զեկույցից ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. 2022թ. https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2023/05/lgbtreport2022hy.pdf [Մուտք գործած՝ հուլիս 2023թ.]

վրա, փորձել են վերահսկել նրա շփումները: Նրա զուգընկերուհու հետ ընտանիքի կոնֆլիկտից հետո վերցրել են նրա հեռախոսը, փակի տակ պահել, նաև ծեծել են՝ հարվածելով մարմնի տարբեր մասերին, այդ թվում՝ գլխին: Դիմողը թաքուն է շփվել իր զուգընկերուհու հետ: Աղջկա քույրը տեղյակ է եղել նրա և զուգընկերուհու հարաբերությունների մասին, սպառնացել է, որ եթե չդադարեցնի շփվել իր զուգընկերուհու և նույնասեռական ընկերների հետ, ընտանիքի մյուս անդամներին կասի քրոջ կողմնորոշման մասին: Աղջիկը ստիպված է եղել թաքուն փախչել տնից, որպեսզի իրեն այլևս բռնության չենթարկեն: Դրանից հետո աղջկա ընտանիքի անդամները կապվել են նրա հետ, սպառնացել, որ եթե չհանդիպի իրենց հետ, ոստիկանություն կդիմեն: Աղջիկը ստիպված է եղել հանդիպել, հանդիպման ընթացքում ևս սպառնալիքների միջոցով փորձել են համոզել, որ վերադառնա տուն: Ընտանիքի անդամները սպառնացել են նաև զուգընկերուհուն, որ ոստիկանություն կդիմեն աղջկան առևանգելու համար, եթե նրանք չդադարեցնեն շփումը: Տուժողը նախկինում բախվել է ոստիկանության խտրական վերաբերմունքին, երբ սպառնացել են, որ կբացահայտեն նրա կողմնորոշումը: Դրանից հետո դիմողը չի վստահում ոստիկանությանը: Բացի այդ՝ մարզային ոստիկանությունը ծանոթ է իր ընտանիքի անդամներին, ուստի նա վստահ է, որ ոստիկանությանը դիմելն արդյունք չի տալու:

Նույնսեռ զույգերի շրջանում ընտանեկան բռնության դեպքեր

Փինքի սոցիալական աշխատող և իրավաբան մասնագետների կողմից 2022թ. արձանագրված զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի հավաքագրման արդյունքում առանձնացվել է ևս 6 դեպք[29]:

2022թ.-ին լեսբի կնոջ զուգընկերը պարբերաբար ճնշումներ է գործադրել նրա նկատմամբ, վերահսկել է անձնական նամակագրությունները, խանդի տեսարաններ է սարքել: Եղել է դեպք, երբ նաև հրել է զուգընկերոջը և վայր գցել գետնին, ինչի արդյունքում վնասվել է դեմքը: Այցելուն հրաժարվել է դիմել ոստիկանություն: Տուժողը բնակվում է Երևանում:

Սոցիալական աշխատողի կողմից արձանագրված դեպք

2022թ. օգոստոսին, տրանս կնոջ զուգընկերը, հոգեներգործող նյութերի ազդեցության տակ այցելուից պահանջել է իր համար հակաօրինական արարք կատարել: Երբ այցելուն հրաժարվել է, զուգընկերը հարվածել է նրան, դանակով հարձակվել նրա վրա: Տուժողը կարողացել է դուրս փախչել: Դեպքի հետ կապված տրանս կինը դիմել է մասնագիտական աջակցության, որի ընթացքում մասնագետն արձանագրել է, որ տրանս կնոջ զուգընկերը 2022թ. նրան պարբերաբար ֆիզիկական բռնության է ենթարկել, մասնավորապես՝ հարվածներ է հասցրել, այցելուի հիշելով մոտ 3 անգամ: Տուժողը բնակվում է Երևանում:

Փաստաբանի կողմից արձանագրված դեպք

Տուժողը մոտ 1 տարի հանդիպել է զուգընկերոջ հետ: Այնուհետև հասկացել է, որ զգացմունքները սառել են, հայտնել է ընկերոջը, որ ուզում է դադարեցնել սիրային հարաբերությունները: Ընկերը դրանից բարկացել է, սպառնացել է, որ հարաբերությունները դադարեցնելու պարագայում դիմողի կողմնորոշման մասին կհայտնի նրա ընտանիքին: Ստիպել է, որ իրեն հաշվետու լինի իր գործողությունների մասով՝ ուր է գնում, ում հետ է շփվում: Զուգընկերը նաև արգելել է շփվել որոշ մարդկանց հետ՝ կասկածելով, որ դիմողը նրանց հետ հարաբերությունների մեջ է: Բացի այդ՝ երբ դիմողը նկարներ է հրապարակել այլ տղաների հետ, զուգընկերը վիճաբանել է նրա հետ՝ նրան անընդհատ լարվածության մեջ պահելով: Դիմողի զուգընկերը սպառնացել է, որ կհասնի նրան, որ

[29] Սույն դեպքերը ներառված չեն Փինքի տարեկան զեկույցում: Կազմակերպության մասնագետներն իրականացրել են առանձին արձանագրում սույն հետազոտության շրջանակներում:

դիմողի գործընկերոջը ազատեն աշխատանքից, քանի որ կասկածել է, որ նրանք հանդիպում են: Տուժողը բնակվում է Երևանում:

Սոցիալական աշխատողի կողմից արձանագրված դեպք

Դիմողը իր զուգընկերոջը հայտնել է, որ պատրաստվում է մեկնել արտերկիր: Դրանից հետո դիմողի զուգընկերը մանիպուլյացիայի է ենթարկել դիմողին՝ պահանջելով, որ չգնա արտերկիր, քանի որ դրանից ինքը վատ կլինի: Զուգընկերը վիճաբանել է դիմողի հետ, սկսել է ագրեսիվ տոնով խոսել, նաև ֆիզիկական բռնություն է գործադրել՝ հարվածել է դիմողին, դիմողը վայր է ընկել, ինչից հետո զուգընկերը շարունակել է հարվածներ հասցնել նրա մարմնի տարբեր հատվածների: Զուգընկերը, չբավարարվելով դրանով, հարվածել է դիմողի ընտանի կենդանուն՝ դիմողին հոգեբանական ցավ պատճառելու նպատակով: Զուգընկերները բնակվում են միասին Երևանում:

Սոցիալական աշխատողի կողմից արձանագրված դեպք

Դիմողի 2022թ.-ին դիմել է կազմակերպության սոցիալական աշխատողին իր և զուգընկերոջ հարաբերությունների կարգավորման հարցերը քննարկելու համար: Հանդիպմանը ներկա է եղել նաև զուգընկերը: Եռակողմ քննարկման արդյունքում զուգընկերը դիմողի հետ կապը նկարագրելիս շեշտել է սահմանափակումները այլ անձանց հետ շփվելու, ինչպես նաև՝ բազմիցս իր կամքին հակառակ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքը:

Սոցիալական աշխատողի կողմից արձանագրված դեպք

Դիմողը նշում է, որ իր շարունակական հարաբերություններում պարբերաբար ենթարկվել է հոգեբանական բռնության, ճնշումների ու սահմանափակումների: Իր հարաբերություններում անընդհատ վիճում էր զուգընկերոջ հետ: Վերջինս անընդհատ սահմանափակում էր իրեն, վերահսկում իրեն ու իր շփումները: Դիմողի զուգընկերը մտածում էր, որ մեկ ուրիշը կհայտնվի իր կյանքում, դրանից ելնելով էլ արգելում էր շփվել այլոց հետ: Դիմողը մտածում էի, որ կկորցնի նրան, եթե չանի իր ուզածը: Դիմողը բնակվում է ՀՀ մարզերից մեկում:

Սոցիալական աշխատողի կողմից արձանագրված դեպք

Հարկ է նշել, որ զուգընկերոջ կողմից բռնության դեպքերն առանձին չեն արձանագրվել, քանի որ շահառուները չեն դիմել հենց զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվելու հարցով: 2022թ.-ին արձանագրված վերոնշյալ դեպքերում շահառուները դիմել են մասնագետներին այլ հարցերով և աջակցության տրամադրման ժամանակ մասնագետներն արձանագրել են նաև զուգընկերոջ կողմից շարունակական բռնության առկայությունը:

Հասկանալի է, որ դեպքերը չեն արծարծում նույնասեռ զույգերի շրջանում առկա ամբողջական պատկերը, սակայն հնարավորություն են ընձեռում փաստել բռնության առկայությունը և դուրս բերել որոշակի միտումներ: Մասնավորապես, դեպքերին բնորոշ է շարունակական վերահսկողության առկայությունը զուգընկերոջ կողմից, որը կարող է զույգի կողմից չընկալվել որպես բռնության դրսևորում: Հատկանշական է, որ մասնագիտական աջակցությանը դիմումները եղել են հենց ֆիզիկական բռնության կամ շանտաժի առկայության դեպքում, որոնք գիտակցվել են որպես խնդրային դրսևորումներ:

2.4 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՇՏԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

ԼԳԲՏ+ անձանց շրջանում զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի ընթացքի ու դրսևորման, տարբեր կառույցներին դիմելիության հարցերն ու խոչընդոտները, առկա պատկերացումները հասկանալու համար իրականացվել են փորձագիտական հարցազրույցներ: Վերջիններս իրականացվել են ոլորտային այն կազմակերպությունների մասնագետների և խորհրդատուների հետ, որոնք ներգրավված են ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանության և գենդերային հիմքով բռնության կախարգելմանն ուղղված գործունեությունում կամ տրամադրում են աջակցություն բռնության ենթարկված անձանց: Սույն հետազոտության շրջանակներում իրականացվել են 4 տարբեր կազմակերպություններում աջակցություն տրամադրող 15 փորձագետների հետ՝ 2 իրավաբան, 1 սոցիալական աշխատող, 3 հոգեբան և 9 հավասարը հավասարին խորհրդատու կամ համայնքային աշխատակից: Հարցազրույցներն իրականացվել են 2023թ. ապրիլ-մայիս ամիսներին:

Հարցազրույցներն ուղղված էին դուրս բերելու փորձագետների պատկերացումները և փորձառությունը հետևյալ հարցերի շրջանակներում՝

- Նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության հասկացումը և տարածվածությունը,
- Նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության դրսևորման առանձնահատկություն-ները,
- Հասարակության շրջանում առկա պատկերացումները նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնությանը և ազդեցությունը վերջինիս դրսևորման վրա,
- Փորձագետների՝ նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության հետ աշխատանքի փորձառությունը,
- Նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ քայլերն ու առաջարկությունները:

Նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության հասկացումը և տարածվածությունը

Փորձագետները նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնությունը սահմանում են՝ որպես քվիր ոչ հետերանորմատիվ զույգերում առկա բռնություն, որը ունի ամենատարբեր դրսևորումներ ինչպիսին է հոգեբանական, ֆիզիկական, տնտեսական, սեռական բռնությունը, ինչպես նաև՝ մարդու կամքին հակառակ որևէ գործողություն անելը, ցավ պատճառելը: Նաև նշվել է, որ նույնասեռ զույգերում առավել հաճախ հանդիպում են հոգեբանական բռնությունը և մանիպուլիացիաների դրսևորումները, մասնավորապես՝ զուգընկերոջ մոտ մեղքի զգացում առաջացնելը:

«...եղել է դեպք երբ զուգընկերներից մեկը որոշակի տեսակի սեռական հարաբերություն է ուզել, մյուս զուգընկերը պատրաստ չի եղել դրան, բայց արդյունքում արել է զուգընկերոջ ցանկացածը մի քանի անգամ, բայց կարողացել է դադար տալ, փաստացի վատ վիճակում դիմել է ինձ հոգեբանական աջակցության համար և ասել է՝ « ինձ թվում էր, որ սա ամենաապահով հարաբե-րությունն է, որ կարող էր լինել, ես դրա համար եմ էստեղ»: Իր համար իրոք շոկային էր եղել, որ կինը կնոջ նկատմամբ կարող է այդպես դաժան բաներ անել: Որովհետև ասվում է, որ կինը կնոջը հասկանում է, բայց դե պետք է բացատրել, որ կինը երբեմն նույն դերերը վերարտադրողն է...»:

Սոցիալական աշխատող

Փորձագետների մեծամասնությունը գտնում է, որ նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնությունը ավելի տարածված չէ, հիմնավորելով, որ նույնասեռ հարաբերություններում դերերը ավելի

հավասար կարող են լինել, իսկ իրավագիտակցության մակարդակը կարող է փոխել իրավիճակը այս հարցում, քանի որ ենթադրվում է, որ տարասեռ զույգերում ավելի շատ պահպանողականի ձգտող մտածելակերպ ունեն, քան նույնասեռ զույգերում: Նաև նշվում է, որ ամուսնության ինստիտուտին մեր հասարակությունը ավելի լուրջ է վերաբերվում, բայց քանի որ նույնասեռ զույգերի միջև ամուսնություն առկա չէ Հայաստանում՝ այս զույգերը ավելի հեշտ են հեռանում բռնության միջավայրից:

«... Մենք դեռ ինֆո չունենք դեպքերը շատ են, թե քիչ: Հաճախ նույնասեռ մարդիկ հարաբերություններում չեն ընկալում, որ իրենք բռնության մեջ են: Բայց լինում են դեպքեր, երբ կա բռնություն ու չեն ընկալում բռնությունը, որովհետև որակում են որպես՝ երկուսս էլ տղամարդ ենք, ինքը ինձ խփեց ես էլ իրան»:

Հավասարը հավասարին խորհրդատու

«...զուգընկերային հարաբերությունների մեջ գտնվող նույնասեռ զույգ կար: Հարաբերությունների ընթացքում մի կողմը մեկ-մեկ նկարել էր սեռական հարաբերությունները, մյուսը ի սկզբանե իմացել էր, որ նկարում է, բայց հետո բաժանվելու պրոցես է սկսվել, ներքին կոնֆլիկտա էղել ու մեկը մյուսին շանտաժա արել, որ վիդեոները ցույց կտա, կասի զուգընկերոջ կողմնորոշման մասին, խայտառակ կանի, արդյունքում զոհը մի քանի ամիս մնացել է այդ հարաբերություններում ու ընթացքում մի քանի անգամ ֆիզիկական բռնության է ենթարկվել ու վերջում աղջիկը կարողացել էր հեռանալ երկրից, իսկ երբ հետ էր եկել՝ կապերը խզել էր: Արդյունքում, երբ նոր հարաբերությունների մեջ է մտել, նախկին զուգընկերը նկարները նորից ուղարկել է ու ասել է, որ ցույց կտա իր ներկայիս զուգընկերոջը: Ու նաև ինչ-որ բաներ էր տարածել համայնքի շրջանում...»

Սոցիալական աշխատող

Փորձագետներից որոշները նշեցին, որ նույնասեռ և տարասեռ զույգերի միջև բռնություններում էական տարբերություններ չկան: Ըստ փորձագետների երբեմն տպավորություն է, որ նույնասեռ հարաբերություններում դրսևորվում են հետերոնորմատիվ բարքեր, հատկանիշներ, և մարդիկ անընդհատ տանում են այդ բարքերը իրենց հարաբերություններ:

«Հաճախ մարդիկ մտածում են, որ նույնասեռ զույգերում չկա բռնություն, հատկապես կին-կին հարաբերություններում»:

Համայնքային պատասխանատու

«Բռնության հիմքում, ինձ համար, կանանց՝ ավելի քիչ իրավունքներ ու կայանալու ավելի քիչ հնարավորություններ ունենալն է, ինչը գալիս է հայրիշխանությունից: Կանայք կախում ունեն տղամարդուց, ինչը թույլ չի տալիս գնալ բռնություն պարունակող միջավայրից, տղամարդիկ էլ ձգտում են օգտագործել իրենց ուժն ու իշխանությունը, իսկ նույնասեռ զույգերը վերարտադրում են հարաբերության նման մոդելը:»

Հավասարը հավասարին խորհրդատու

Փորձագետները նշում են, որ ընդհանուր առմամբ անառողջ հարաբերությունները նորմալիզացված են հայ հասարակությունում:

«Հայկական իրականությունում մենք չունենք առողջ հարաբերությունների մոդելներ, նույնասեռ զույգերի մասով՝ առհասարակ»:

Իրավաբան

Փորձագետներից մեկը մատնանշում էր նաև, որ տրանս մարդիկ շատ ավելի խոցելի են հարաբերություններում: Հատկապես սեռափոխության, հորմոնաթերապիայի ընթացքում շատ ավելի զգայուն են լինում, կարիք են ունենում հոգատարության ու աջակցության: Լինելով ավելի խոցելի՝ հայտնվում են անառողջ ու բռնարար հարաբերություններում, ձևավորում հուզական կապվածություն, որի պարագայում շատ ավելի դժվար է լինում դուրս գալ այդ հարաբերություններից:

Նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության դրսևորման առանձնահատկությունները

Փորձագետները գտնում են, որ տարածված նշանները բոլորի մոտ նույնն են անկախ նրանից զույգը տարասեռ է, թե նույնասեռ: Օրինակ, լարված հարաբերությունները, շարունակական կոնֆլիկտները, վնասվածքների առկայությունը նույնն է: Փորձագետները նշում են, որ հիմնականում կարելի է նման դրսևորումներից եզրակացնել, որ մարդը գտնվում է բռնություն պարունակող հարաբերություններում, երբեմն էլ մարդիկ պատմում են կոնկրետ դեպքեր, որոնք հստակ փաստում են բռնության առկայության մասին: Բռնությունները հարաբերություններում անձի մոտ առաջացնում են տագնապի ու լարվածության զգացում, անհանգստություններ, ինչպես նաև՝ անազատության զգացում:

Ընդհանուր առմամբ փորձագետները նշում են, որ անառողջ ու բռնարար հարաբերություններում գտնվող անձինք բռնությունը, որպես այդպիսին չեն նույնականացնում: Հոգեբան փորձագետները նշում են, որ այցելուները սկսում են խոսել հարաբերություններում բռնության մասին թերապիայի ընթացքում կամ բաժանումից հետո:

«Անառողջ հարաբերությունները շատ հաճախ նորմալիզացվում են, հաճախ մարդիկ գիտակցում են, որ բռնություն կա հարաբերություններում, բայց բռնությունը նաև ստեղծում է կախվածությունը՝ զոհ - բռնարար, որը շատ դժվար է բաց թողնելը և երբեմն արդարացվում են զոհի կողմից»:

Հոգեբան

«Անառողջ և բռնարար հարաբերությունների ակնհայտ նշան են, երբ զուգընկերներից մեկը ստուգում է մյուսի հեռախոսը կամ առանց զուգընկերոջ ոչ մի տեղ չգնալ»

Համայնքային պատասխանատու

Սակայն կան որոշ առանձնահատկություններ, որոնք տարբերում են նույնասեռ ու տարասեռ զույգերի հարաբերությունները՝ առավել ցայտուն լինելով կամ դրսևորվելով միայն նույնասեռ զույգերում: Նույնասեռ զույգում այդպիսի օրինակներ են զուգընկերոջը մեղադրելը գենդերային արտահայտման մեջ ու պարբերաբար հոգեբանական ճնշման ենթարկելը:

« Շատ ականատես եմ եղել գեյ տղամարդկանց մոտ, որ կարող է իրենց զուգընկերոջը ասեն դու ղզիկ ես ու դու ֆեմինին ես ու տենց բուլի անեն, որ ինքը ավելի «տղավարի» լինի»:

Հավասարը հավասարին խորհրդատու

«...կին-կին հարաբերություններում ավելի շատ լինում է, որ ասեն՝ «դու շատ տղավարի ես պահում» կամ պահանջել, որ «ավելի շատ տղավարի կամ ավելի քիչ տղավարի պահեն» կամ ասեն՝ «իմ ընկերուհին ինձ չի թողնում շփվեմ մյուս աղջիկների հետ»...: Սեռական ոտնձգություններ էլ են լինում, քանի որ զույգերից մեկը ցանկանում է, որ օրվա ընթացքում մի քանի անգամ սեռական հարաբերություն ունենան, բայց մյուսը չի ուզում կամ ի վիճակի չի, բայց դիմանում է, որովհետև մանիպուլացվում է, որ եթե չանի ուրիշի մոտ կգնա...»:

Հավասարը հավասարին խորհրդատու

Ինչպես փաստում են իրավաբան փորձագետները վերոնշյալին նման է նաև սպառնալիքը և շանտաժը՝ երբ զուգընկերներից մեկը սպառնում է բացահայտել մյուսի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը՝ հարաբերությունները դադարեցնելու պարագայում: Փորձագետները նշում են, որ իրավիճակը նման դեպքերում կրկնակի բարդանում է, քանի որ հասարակության կողմից ճնշմանը գումարվում է զուգընկերոջ կողմից հոմոֆոբիայի դրսևորումների վերարտադրումը ու կարծրատիպային մոտեցումը: Հաճախ նաև բռնության դրսևորումները զույգերի կողմից արդարացվում են «խանդ» անվանելով:

Փորձագետները նշում են նաև, որ հասարակության, ընտանիքի, անմիջական միջավայրերի կողմից ընդունված չլինելը խորը ազդեցություն է ունենում նույնասեռ հարաբերություններում: Օրինակ՝ մի շարք ԼԳԲՏ+ անձինք խուսափում են խորացնել իրենց հարաբերությունները, իսկ հարաբերություն-

ներում թաքնված լինելը՝ վախենալը, որ կբացահայտվի իրենց սեռական կողմնորոշումը ու նույնասեռ հարաբերությունում լինելու փաստը, լարվածության առիթ է դառնում:

«Նույնասեռ հարաբերությունները ավելի շատ են խտրականացվում ու կարծրատիպացվում հասարակության կողմից, որը նաև բացասական գործոն է հանդիսանում առողջ հարաբերություններ ստեղծելու ընթացքում»

Հոգեբան

Նույնասեռ հարաբերություններում ակտուալ ու հանդիպող է նաև սեռական բռնության դրսևորումը:

«Հարաբերություններում այդ սահմանները [սեռական, մարմնական] հաճախ խախտվում են, ու մարդիկ ընթացքում են հասկանում, որ դա նորմալ չէ»:

Համայնքային աշխատող

Հասարակության շրջանում առկա պատկերացումները նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնությանը և ազդեցությունը վերջինիս դրսևորման վրա

Մարդկանց ընդհանուր թյուր պատկերացումներից փորձագետները նշեցին այն կարծրատիպը, որ նույնասեռ զույգերի միջև բռնություն չի կարող լինել. դա հաճախ գալիս է նույնասեռ հարաբերությունների թյուր ընկալումից: Դրա հիմնական պատճառներից են՝ անլուրջ մոտեցումը նույնասեռ հարաբերություններին. որպես զուգընկերային հարաբերություններ չընկալելը: Իսկ նույնասեռական մարդիկ շատ հաճախ ռոմանտիզացնում ու իդեալականացնում են նույնասեռ հարաբերությունները, հաճախ մտածում են, որ նույնասեռ հարաբերություններում զույգերը ավելի շատ են քննարկում խնդիրները, ավելի հեշտ են լուծում, սակայն, իրողությունը այլ է:

«...Հատկապես տրանս անձանց դեպքում երբեմն նորմալիզացվում է բռնությունը և լինում է նաև թրաֆիքինգ, երբ իրենց զուգընկերը սպիպում է սեքս աշատանք անել ու գումարը տալ իրեն...»:

Հավասարը հավասարին խորհրդատու

Փորձագետները նշում են նաև, որ հետերոնորմատիվ ընկալումները իրենց ազդեցությունն են թողնում նույնասեռ հարաբերություններում: ԼԳԲՏ+ անձինք լինելով հասարակության անդամներ հաճախ կրում են նույն հետերոնորմատիվ պատկերացումները և վերարտադրում են կարծրատիպային դերերը ու վարքաձևերը: Հարաբերություններում դերերը բաշխվում են ըստ իշխողի և ենթարկվողի, որը նույնական է տղամարդ-կին հարաբերություններում:

«Նույնասեռ հարաբերությունները չեն տարբերվում հետերոսեքսուալ հարաբերություններից, ուղղակի մարդիկ են դերերն իրենք իրենց վրա վերցնում»:

Համայնքային աշխատող

Երբեմն մարդիկ, իմանալով բռնության դեպքի մասին, հիմնականում մտածում են, որ «բռնարարը» ավելի «մասկուլին/առնական» զուգընկերն է:

«Մարդիկ կարծում են, որ եթե զույգերից մեկը մասկուլին կերպար է, ուրեմն «բռնարարը» ինքն է: Նաև կա կարծրատիպ, որ աղջիկների միջև հարաբերությունը հոգևոր է, այնտեղ բռնություն լինել չի կարող, որովհետև կանայք հասկանում են իրար»:

Հավասարը հավասարին խորհրդատու

Սա բացատրվում է ընդհանուր հասարակության մեջ տարածված միտումներով, երբ, հիմնականում տղամարդիկ բռնության են ենթարկում այլոց՝ հաստատելու իրենց իշխանությունը: Ըստ հարցման մասնակիցների՝ նույնը երբեմն կատարում են նաև այլ անձինք, ովքեր ունեն ավելի մասկուլին/առնական հատկանիշներ, կամ անցել են նմանատիպ սոցիալականացում, սակայն, դա չի կարելի տարածել ամբողջ ԼԳԲՏ+ համայնքի վրա:

Մասնակիցները կարծում են, որ նույնասեռ հարաբերություններում զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի տարածվածությանը նաև նպաստում են չընդունման և խտրականության մթնոլորտը, նույնասեռ կանանց հարաբերությունների արժեզրկման և անձանց սեռականացման միտումը, բռնությունը հասարակայնորեն անտեսելը և օրինականացնելը, հասարակությունների երկբևեռ մոդելավորումը, իշխանության հաստատման անառողջ միտումները և ընտանիքների՝ ոչ ընդունող ու հասկացող լինելը:

«Հասարակությունը պարսավանքի է ենթարկում նույնասեռ զույգերին ու այդ հարաբերությունը, ընտանիքներում չեն հարգում այդ անձանց ընտրությունը ու արժեքները, դուրս են վռնդում զույգերին: Դա հանգեցնում է անվստահության բարձր մակարդակի, ինչը խանգարում է նույնասեռ անձին՝ բարձրաձայնել բռնության մեջ գտնվելու մասին: Օրինակ հետերոսեքսուալ զույգերը կարող են հայրական տանը բարձրաձայնել դրա մասին ու գնալ բռնություն պարունակող հարաբերությունից, իսկ նույնասեռ հարաբերություններում բացակայում է նման հնարավորությունը:»

Իրավաբան

Կարող ենք եզրակացնել, որ մշակութային և հասարակական կարծրատիպային և խտրական վերաբերմունքը նպաստում են նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության աճին, քանի որ վախենալով ենթարկվել խտրականության՝ ԼԳԲՏ+ անձինք մնում են բռնարար հարաբերություններում՝ վերարտադրելով հետերոնորմատիվ դերեր: Հասարակության չընդունող վերաբերմունքի արդյունքում վախենում են բարձրաձայնել բռնության մասին և մնում են փակ շղթայում: Խնդիրներից է նաև, որ մեդիայով, ֆիլմերի միջոցով նույնասեռ զույգերը չեն տեսնում առողջ քվիր հարաբերությունների օրինակները, ինչը թույլ է տալիս վերարտադրել անառողջ հարաբերությունները:

«... դու չես կարա բարձրաձայնես, թե ոստիկանությունում թե հասարակության մեծ մասի մոտ ընտանեկան բռնությունը արդարացվում է ու էստեղ հարց է առաջանում՝ ում դիմի մարդը մանավանդ երբ նունասեռական է...»:

Հավասարը հավասարին խորհրդատու

Փորձագետների՝ նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության հետ աշխատանքի փորձառությունը

Ըստ փորձագետների, երբ արդեն խոսքը գնում է բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքի մասին, սկզբնական փուլը կարող է ուղեկցվել դիմադրությամբ, քանի որ երբեմն բռնության ենթարկված անձինք չեն պատկերացնում, որ այն, ինչ իրենց հետ կատարվում է, բռնություն է: Փորձագետներից ոմանք, որպես սկզբնական միջոց սկսում են խոսել կարծրատիպերից, գենդերային դերերից, բռնության տեսակներից:

Նաև նշում են, որ կարևոր է ապահով տարածքի ստեղծումը առանց քննադատության մոտեցումը, ինչպես նաև՝ որպես կանխարգելիչ միջոց համայնքի շրջանում իրազեկվածության բարձրացումը:

«...Շատ բարդ է, որովհետև դու չգիտես՝ ու՞ր գնաս ու ու՞մ դիմես, որովհետև կասեն քիչա գեյ ես, մի հատ էլ ուզում ես ասես, որ բռնության ես ենթարկվում. նաև էն պահը կա, որ դու մտածում ես, քանի որ համայնքի անունը ընկած է հասարակության մեջ դու չես ուզում մարդիկ մտածեն, որ համայնքի մարդիկ բռնարար են»:

Հավասարը հավասարին խորհրդատու

Նույնասեռ զույգերում բռնության տարանջատումը կարող է դժվար լինել ոչ միայն նույնասեռ զուգընկերների համար, այլ նաև մասնագետների համար, որոնք չեն ունեցել նման փորձառություն: Փորձագետներից որոշները նշել են, որ հիմնականում չեն պատկերացրել, որ նույնասեռ զույգերում ևս կարող է լինել բռնություն, բայց աշխատանքի արդյունքում լսել են տարբեր փորձառություններ, որի արդյունքում փոխվել են պատկերացումները:

«...եղել է դեպք, երբ մի զուգընկերը մյուսին ասել է դու շատ կանացի ես, դու ինձ սենց դուր չես գալիս, աբոնիմենտ է առել մյուսի համար, որ գնա մարզվի ու ավելի «տղամարդկային» դառնա, տարել է էնդոկրինոլոգի մոտ, որ գնա տեստեստերոն ստանա կամ հակառակը՝ փողա տվել, որ գնա էպիլացիա անի, որ ամբողջական կանտրոլ ունենա դիմացինի մարմնի վրա...»

Հավասարը հավասարին խորհրդատու

Նույնասեռ հարաբերություններում բռնությունն արձանագրելու ժամանակ աջակցության ամենաարդյունավետ միջոցներից են անպայմանորեն օգնելն անձին ճանաչել բռնությունը, որակել իրողությունը որպես բռնություն, իրազեկել և ուղղորդել համապատասխան մասնագետին, եթե կա համաձայնություն: Փորձագետները նշել են նաև, որ կարևոր է խոսել բռնություն երևույթի մասին, կիսվել պատմություններով, որովհետև դա բռնության մասին իրազեկող, բռնությունը ճանաչելուն օգնող գործընթաց է:

«Ընկերներիցս մեկը գտնվում էր բռնության մեջ, որտեղ ստեղծել էր իր ապահով տարածքը, ու չէր ուզում դուրս գալ այդ հարաբերությունից: Իրեն լսելուց հետո հասկացա, որ ես ևս գտնվում եմ հարաբերության մեջ, որտեղ կա ակնհայտ բռնություն, ու դա ինձ օգնեց լսել նրան, առանց քննադատելու, դուրս գալ այդ հարաբերությունից:»

Հավասարը հավասարին խորհրդատու

«Նման դեպքերի մասին լսելը ինձ ամեն անգամ ավելի ապրումակցող ու իրազեկ է դարձնում: Լինելով այս հասարակության մի մասը և լսելով նման դեպքերի մասին, ես փորձում եմ ինքս իմ անձնական դաշտում, իմ ընկերների ու ընտանիքի անդամների մոտ փոխել վերաբերմունքը նույնասեռ անձանց ու նրանց հարաբերությունների հանդեպ:»

Իրավաբան

Խոսելով բարձրաձայնելու ու պաշտպանության դիմելու մասին՝ փորձագետները նշում են, որ բռնության մասին բարձրաձայնում են, երբ արդեն ֆիզիկական բռնություն է տեղի ունենում: Բոլոր այն դեպքերում, երբ ֆիզիկական բռնություն է եղել, դրան նախորդել է կամ զուգակցվել է հոգեբանական բռնությամբ: Որոշ դեպքերում հոգեբանական բռնության մասին չեն բարձրաձայնում կամ չեն նույնականացնում այն որպես բռնություն:

«Մարդիկ չեն սիրում խոսել, բարձրաձայնել զուգընկերոջ կողմից բռնության մասին, քանի որ համարում են որ դա իրենց անձնական հարցն է, ու նաև ամաչում, որ նման բան է տեղի ունենում»:

Իրավաբան

ԼԳԲՏ+ անձինք խուսափում են դիմել ոստիկանություն զուգընկերոջ կողմից բռնությունների դեպքում: Իրավաբան փորձագետը նշեց, որ զուգընկերոջ կողմից բռնության դեպքում, երբ դիմում են ոստիկանություն, չեն բացահայտում զուգընկեր լինելու հանգամանքը: Իսկ այդ դեպքերում, երբ բացահայտել են զուգընկեր լինելու հանգամանքը՝ իրավական տեսանկյունից համապատասխան գնահատականի չեն արժանացել:

«Նույնասեռ զույգերի միջև բռնությունը ընտանեկան բռնության օրենքով կամ հիմա գործող քրեական օրենսգրքով չի որակվում ընտանեկան բռնություն: Օրենսդրությունը իմ կարծիքով թույլ տալիս է, բայց պրակտիկա չունենք այդ մասով»:

Իրավաբան

Նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ քայլերն ու առաջարկությունները

Փորձագետները նշում են, որ կարիք կա հասարակությունում աշխատել մի քանի ուղղություններով՝ նույնասեռ զույգերում բռնությունը կանխելու և վերապրածներին աջակցելու համար: Նախ և

առաջ, կարիք կա բարձրացնել իրազեկվածությունը բռնության առկայության և ճանաչման մասին, այնուհետև՝ ԼԳԲՏ+ անձանց տեսանելիության բարձրացումը և հասարակության դիրքորոշումների փոփոխությունը ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ:

Մյուս կողմից, կարևոր է սեռակրթությունը, ինչը ներառում է փոքր տարիքից կրթել ու իրազեկել աշակերտներին, ուսանողներին, փորձել երկխոսել ծնողների ու ընտանիքի այլ անդամների հետ, ու մարդկանց կրթել, որ ճանաչեն իրենց սահմանները, բնորոշեն բռնությունը և նույնականացնեն իրենց հետ կատարվողը: Իսկ արդեն բռնության առկայության պարագայում՝ անհրաժեշտ է աշխատանք անձի ինքնագնահատականի հետ՝ անձնական սահմանների վերակառուցման ու անձի ուժեղացման նպատակով: Փորձագետները կարևորում էին նաև սեռականության ու բռնության թեմաների շուրջ քննարկումները հենց կրթական հաստատություններում՝ օրինակ դպրոցներում:

«Իրազեկվածության բարձրացումը նույնասեռ անձանց շրջանում: Սակայն, ինքս ներգրավված լինելով նման դասընթացներին, տեղեկացված լինելով, ինքս չեմ տարբերակել իմ հանդեպ բռնությունը և չեմ կարողացել դուրս գալ այդ հարաբերությունից: Ուստի, կարևոր կլինի բռնությունը ճանաչել տալ, ապա աշխատել այդ դեպքերի հետ»:

Հավասարը հավասարին խորհրդատու

«Սկզբում իրազեկել, իրազեկումը կանխարգելման լավագույն մեխանիզմներից մեկն է. իրավունքների իմացություն: Հոգեբանականը՝ ինքնագնահատականի հետ աշխատանք, սահմանների հետ աշխատանք, մեղքի զգացման հետ աշխատանք, ես-ի հետ աշխատանք, տրավմաների հետ աշխատանք»:

Հոգեբան

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ընտանեկան բռնությունը հանդիսանում է Հայաստանում և միջազգայնորեն ճանաչված լուրջ մարտահրավերներից մեկը, որի հաղթահարմանն ուղղված ջանքերը պետք է կրեն համակարգային բնույթ՝ ապահովելով կանխարգելմանն ու արձագանքմանն ուղղված քաղաքականություններում տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը: Ընտանեկան բռնության դրսևորումները կրում են համատարած բնույթ և առնչվում են հասարակության բոլոր անդամներին ու խմբերին՝ ներառյալ ԼԲՏ+ կանանց և նույնասեռ զույգերին՝ առանց բացառության:

Անդրադառնալով հայաստանյան իրականությանը և մասնավորապես ԼԲՏ+ կանանց նկատմամբ ընտանեկան բռնությանը և նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնությանը՝ իրավիճակը չի հանդիսանում խոստումնալից՝ համաձայն առաջնային հավաքագրված տեղեկության:

Ընտանեկան բռնության կանխարգելմանն ու դեպքերին արձագանքին ուղղված իրավակարգավորումները և դրանց կիրառումը բավարար չափով չեն կարողանում ապահովել ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ՝ ներառյալ ԼԲՏ+ կանանց նկատմամբ ընտանիքի անդամների կողմից շարունակական բռնության դեպքերը՝ առկա մեխանիզմների ոչ պատճաշ իրականացման և ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ խտրականության պայմաններում: Ավելին, նույնասեռ զուգընկերների կողմից իրականացվող բռնության դեպքերը ոչ միայն չեն հասնում իրավապահ մարմիններին և արձանագրվում իրավական բացի առկայության պայմաններում, այլև հաճախ հասանելի չեն լինում հասարակական ու մասնագիտական օղակներին՝ չդիտարկվելով խնդիր հենց նույնասեռ զուգընկերների կողմից:

Ընտանիքի կողմից բռնության դեպքերում ԼԳԲՏ+ անձինք՝ ներառյալ ԼԲՏ+ կանայք, խուսափում են դիմել իրավապահ մարմիններին՝ կրկնազոհացումից խուսափելու համար և համոզված չլինելով, որ առկա մեխանիզմները կկանխեն բռնության հետագա դրսևորումները: Վերջինս վկայում է այն մասին, որ չնայած ընտանեկան բռնության օրենսդրական ու իրավական պաշտպանության մեխանիզմներն առկա են, սակայն դրանց կիրառումը ոչ միշտ է հասանելի ԼԳԲՏ+ անձանց համար:

Եթե ընտանիքի անդամների կողմից բռնության առկայությունը ԼԳԲՏ+ անձանց՝ ներառյալ ԼԲՏ+ կանանց շրջանում հասկանալի ու գիտակցելի է մարդկանց համար, ապա նույնասեռ զույգերի դեպքում բռնության առկայությունը գրեթե չի ընկալվում այդպիսին, ինչի մասին վկայում են աջակցման հասարակական օղակին այդ հարցով դիմելիության բացերը: Ավելին, նույնիսկ ԼԳԲՏ+ անձանց՝ ներառյալ ԼԲՏ+ կանանց աջակցություն տրամադրող հասարակական ու մասնագիտական դաշտերի ներկայացուցիչները կարող են չպատկերացնել բռնության առկայությունը նույնասեռ զույգում: Վերջինս հաճախ պայմանավորված է լինում հասարակությունում առկա կարծրատիպերով և նույնասեռ հարաբերությունների մասին թյուր պատկերացումներով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղական հասարակական կազմակերպություններին և ակտիվիստներին՝

- Իրականացնել ԼԳԲՏ+ անձանց՝ մասնավորապես ԼԲՏ+ կանանց և նույնասեռ զույգերի շրջանում ընտանեկան ու զուգընկերոջ կողմից բռնության մասին իրազեկում՝ ներառյալ հարաբերություններում բռնության նշանների ու դրսևորումների, առկայության դեպքում արձագանքելու ու աջակցության դիմելու հնարավորությունների մասին,
- Իրականացնել իրազեկում հասարակական կազմակերպություններում ներգրավված մասնագետների և աջակցություն տրամադրող աշխատակիցների ու անդամների շրջանում՝ ընտանեկան, ներառյալ՝ զուգընկերոջ կողմից բռնության, երկրում առկա կարգավորումների ու վերջիններիս կիրառելիության մասին,
- Կազմակերպել հասարակական կազմակերպություններում ներգրավված մասնագետների և աջակցություն տրամադրող աշխատակիցների ու անդամների շրջանում բռնություն վերապրած ԼԳԲՏ+ անձանց զգայուն աջակցություն տրամադրելու վերապատրաստումներ,
- Խթանել հասարակական կազմակերպություններում ներգրավված մասնագետների և ԼԳԲՏ+ անձանց աջակցություն տրամադրող աշխատակիցների՝ ընտանեկան, ներառյալ զուգընկերոջ կողմից բռնության դեպքերով համագործակցությունը միմյանց և իրավապահ մարմինների հետ՝ վերջիններիս հետ շփումներում՝ լինելով ավելի պահանջատեր,
- Կազմակերպել հանրային իրազեկմանն ուղղված արշավներ՝ ընտանեկան և զուգընկերոջ կողմից բռնության ճանաչման, տարբերակման և առկայության դեպքում աջակցության դիմելու հնարավորությունների մասին:

Պետական մարմիններին՝

- Վավերացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան» և ապահովել ընտանեկան բռնության իրավակարգավորումների և առկա մեխանիզմների համապատասխանությունը կոնվենցիայով սահմանված չափորոշիչներին,
- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում իրականացնել փոփոխություններ՝ ներառելով զուգընկերների կողմից բռնության դեպքերի պաշտպանության հնարավորությունը,
- Վարել ընտանեկան բռնության դեպքերով վիճակագրություն ԼԳԲՏ+ անձանց և նույնասեռ զույգերի պարագայում,
- Իրականացնել իրավապահ մարմինների ներկայացուցիչների շրջանում վերապատրաստումներ՝ ապահովելու բանիմաց, ոչ խտրական և զգայուն արձագանք ու քննություն ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության և զուգընկերոջ կողմից բռնության պարագայում դիմելու դեպքում,
- Նախաձեռնել հանրային արշավներ ընտանեկան, ներառյալ՝ զուգընկերոջ կողմից բռնության ճանաչման, տարբերակման և առկայության դեպքում աջակցության դիմելու հնարավորությունների մասին:

Միջազգային կազմակերպություններին և կառույցներին՝

- Հետևողական լինել պետության կողմից օրենսդրական փոփոխությունների և համապատասխան իրավական պաշտպանության պատշաճ իրականացմանը ու համապատասխանեցմանը միջազգային չափորոշիչներին՝ ապահովելու ԼԲՏ+ կանանց ու նույնասեռ զույգերի պաշտպանության հնարավորությունները,
- Ներառել ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության, ներառյալ՝ զուգընկերոջ կողմից բռնության դեպքերը և տվյալները միջազգային զեկույցներում և հետազոտություններում:

ՀԱՎԵԼՎԱԾ

«ԼԲՏ+ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՆՈՒՅՆԱՍԵՌ ԶՈՒՅԳԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Փորձագիտական հարցազրույցի հարցաշար

Ցանկանում եմ մնալ անանուն Այո – Ոչ –

Խնդիր չունեմ հետազոտությունում հարցված մասնագետների ցանկում նշվի անունս՝

Անուն Ազգանուն ՝
Մասնագիտությունը՝
Կրթությունը (նշել ԲՈՒՀ-ը և մասնագիտական ուղղվածությունը)՝

Հարցեր

Պատասխանելով ստորև հարցերին Դուք օգնում եք առաջ տանել հետազոտության մասնագիտական դիրքորոշումների մասին գլուխը՝ նպաստելով ԼԳԲՏ+ անձանց իրավունքների շուրջ հերթական հետազոտության իրականացմանը:

1. Ինչպես եք սահմանում՝ ի՞նչ է նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնությունը:
2. Ձեր կարծիքով, նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնությունը ավելի տարածվա՞ծ է քան տարասեռ զույգերում: Եթե այո, ինչու, եթե ոչ, ինչու:
3. Որո՞նք են ամենատարածված նշաններն ու միտումները, որոնք նկատել եք ձեր պրակտիկայում, որոնք օգնում են ձեզ սահմանել և նույնականացնել դրանք որպես նույնասեռ զույգի մեջ բռնություն:
4. Որո՞նք են նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության մասին մարդկանց ընդհանուր թյուր պատկերացումները:
5. Ձեր փորձից ելնելով, որո՞նք են ամենաարդյունավետ միջոցները կամ ձևերը միջամտելու նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության առկայության դեպքում:
6. Ձեր կարծիքով, մշակութային և հասարակական վերաբերմունքն ի՞նչ դեր է խաղում նույնասեռ զույգերում զուգընկերոջ կողմից բռնության հարցում:
7. Կարո՞ղ եք կիսվել նույնասեռ զույգերում բռնության դեպքերի հետ աշխատելու փորձով, որն ազդել է այս ոլորտում խորհրդատվության ձեր մոտեցումների վրա:
8. Ձեր կարծիքով, ի՞նչ քայլեր կարող է ձեռնարկել հասարակությունը նույնասեռ զույգերում բռնությունը կանխելու և վերապրածներին աջակցելու համար:

www.pinkarmenia.org
www.coalitionagainstviolence.org